ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱՂԳԱՅԻՆ։

ԹԻՒ Ա. — ՇԲՋԱՆ Ի. **1874** ՏԱՐԻ Ի. — ՅՈՒՆՎԱՐ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԹՈՂՈՎՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ։

(Շարունակութիւն)։

Նոքա՛ ըէ՞ր պարտ է Եպիսկոպոսաց պահել զան-ըննաջ պահել զեանձն որբոյ Եկեղեցոյ, և կամ որո՞ց և ո՞ր ինչ ծառայել ըէր։

«Նաւահանդիստ է ամենեցուն տաճարն աղօթից և տեղի խնդրուածոց մերոց, զոր յարանուէնաբար Եկեղեցի սովոր եմք կոչել, ունելով յինքեան նաւապետ կարապետութեան զեռսուէ Եպիսկոպոսն, զի խնամոտ և արդիւնաբար կամօք անշարժ ունիցի զահման իւրոյ կարգին. վասն այնորիկ առհասարակ ի Քրիստոս հաւատացեալք ապաւէն աղատատանի ունին ընդսուրբ Եկեղեցի. զի արդարոց և մեղաւորաց է նաւահանգիստ և տեղի յուսոյ փրկութեան մերոյ. և իւրաքանչիւր որ փութայ սրտիւ յօժարութեամբ զուխտս և զպատարագս և զընծայս իւր մատուցանել. իշխանք զգիօղս և զդատաւորս և զգանձս ոսկւոյ և արծաթոյ. այլք յանդաստանաց և ի պաճարաց և ի հանդերձից պատուականաց. ոմանք վասն անձանց փրկութեան. կէսք յաղագս սիրելեաց և ծնողաց. և զվախճանելոցն հատուցանել մատունս, զարդ և պայծառութիւն կազմելով ոգւոց և մարմնոց. քանզի անսայթաք յորդորմամբ *). քանզի Տէրունական բանն զդուշացուցանէ ծառայից և պատուիրանապահաց իւրոց թէ՝ «Դանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ո՛չ ցեց և ո՛չ ուտիչ ապականեն և ո՛չ գողք ասկան հատանեն և գողանան»։ Եթէ՝ «Դատարկաձեռն ամենևիմբ մի՛ երևեսցիս առաջի իմ»։ «Ձեն այդրէն, ասէ, յերկրի նուիրական տուրքդ ձեր, այլ ի կառս

(*) Բանիւ անսայթաք յորդորմամբ՝ թերութիւն գոյ ի սմին, ուստի և միջանկեալ։

բարձրութեան երկնից, յանսխալ և անվըհպ գանձարանին ,, ։

,, Տեսանեմ զի Աստուծոյ են ինչքն, քանզի իւր համարի զաուրան մեր և ոչ մարդոյ ումեք. բայց միայն զի պահապան և վերակացու է, տեսուչ է Եպիսկոպոսն. բաղում ապա զգուշութեան պէտք են Եպիսկոպոսին և երկիւղի. զի եթէ որք զմարդկան աւանդութիւն կամ պարտս հոգան և աշխատութիւն կրեն ըղձալով թէ՝ երբ վճարիցեն, և եթէ դէպ լինիցի փոքր ի ինչ ծախել, դիր առնեն և վկայս անցուցանեն և երդնուն, զի մի՛ երևեսցին թերիք և դաւողք ի գործն իւրեանց. իսկ Աստուած որ քննիչ է խորհրդոց մերոց և չի՛ք ինչ արարած նմա աներևոյթ, այլ ամենայն մերկապարանոց կայ առաջի աչաց նորա, . . . զի՞նչ պատճառս կամ հնարս հնարիլ Եպիսկոպոսն, յորժամ զաւանդն արքունի զգուշութեամբ ոչ պահիցէ, և ծախիցէ այնոցիկ՝ որոց ոչ իցէ օրէն։ Ընդպիսի ինչ յորժամ աւելի զգեստիւք զինքն պճնիցէ, և փերեւեթիցի սեղութեան և փափկութեան պարապելով, և աղքատանացն զեղուցու տայցէ, և զկատարեան պարարիցէ, և զօրէն իշխանաց բարեկամս անմտանիս յաճախիցէ, և շնորհուիս առնելով ճոխաց և մեծատանց տացէ, այս է չարաչարն վաստնել զարքունիսն, և պատժոց լինել արժանի։ Առաքելական պատուոյ եղեր ժառանգորդ, պարտիս և վարուց նոցա նմանիլ, որպէս գիրք գործոց նոցա վկայեն. բաշխեին ամենեցուն, ումմ զիարդ պիտոյ ինչ լինէր. զի գանձն աստուածային, որում տեսուչ և մատակարարդ կարդեցար, նեղելոց և որբոց և այրեաց տուաւ յապաւինութիւն, և եթէ միանգամայն ինչ աշխարհի վտանգ հասանիցէ ։ Նայց յայլ իրս ամենևին չէ իշխանութիւն ծախել, զի յաղագս հոգւոյ փրկութեան տուան գանձքն. արդ եթէ ոք յայլ ինչ ծախեսցէ, ընդ սեղանապետսն տացէ դատ յաւուրն դատաստանի, և պատիւն բարձցի ի նմանէ. զի թէ ժամանակաւոր թագաւորի գործակալք յանիրաւ իրս ծախելով զարքունիսն, պատիժս կրեսցեն և ի պատուոյն ի բաց անկանին, որչափ ևս առաւել որ զԱստուածայինսն վատնիցեն յանուղղայս, կրեսցեն պատիժս աստ և ի հանդերձելումն. և թէ ոք աչառիցի այնպիսեացն թոյլ տալով, կցորդ եղիցի չարեաց գործոց նոցա ։

,, Նայց և դու, ով մտացի հաւատացեալդ, որ յաղագս ի մեղաց քոց փրկութեան և ախտից զտուրս քո տաս, զի ի բաց ընկեցես զծանրութիւն մեղաց քոց և զայլոց բազմացն այնպէս դիտես, ընդհէր աճապարես զընկեցեալդ տալակաւ բեռինսն այդրէն առնուլ. վասն որոյ մարգարէն սոսկայր թէ՝ Որպէս բեռն ծանր ծանրացաւ ի վերայ իմ. և երանի եթէ զքոյն իսկ ըզբեռն առնուիր, և ոչ զայլոցն. զի որչափ զառնուլն յաճախես քան զտալն, զմեղացըն քոց սաստկացուցանես զբեռինսն, զի և զայլոցն ևս որ ընկեցեալն է ի վերայ քո, մեծերես յօրէնսն և զընկերին զդրաստանկալ ընդ բեռամբք՝ չհրամայէ առնել անտես. Յարուցանելով յարուսցես, ասէ, և դու զո՞նձն զլօրես անկանդնելի խորհրդակամաւք։ Եւ եթէ զայլ ոք տեսանիցէր անկեալ և բեկեալ, թերևս ողորմիցէր, և զքեզ անտէս առնես. յափշտակես, զլանաս զօրբոյն և զայրեացն վարձս, կողոպ-

տես զսէղանն, և գարշիլ պատճառես ի մէհենացն ։

‘‘Ընդ քեզէն տուր ղերաւդ. ոչ ապաքէն մինչ տաս զտուրան ի տունն Աստուծոյ, զծանրութիւն մեղացն ընդ նմին հաւատաս ի բաց ընկենուլ, և յուսաս յաւիտենական պարգևացն լինել արժանի. ապա ուրեմն և առնուլն հակառակ՝ զնորին զմեղացն զբեռինսն այդրէն ի քեզ կուտէ, և մշտնջենաւոր տանջանացն լինի առիթ. զի՞նչ օգտիցէ այնպիսի շնորհ՝ որ զանձն տուժէ և կորուսանէ, և ոչ գտանէ վըրկանս անձին իւրոյ ։

‘‘Լ՚սէր աստուածային դրոյն և ուսի՛ր բարեմտութեամբ. որոյ վայելել հրամայէ այնու ընչիւք. Սեղանոյն պաշտօնեայքն, ասէ, ի սեղանոյ անտի կերակրին. և զի՞նչ է կերակուրն, յայտ առնէ։ Ո՚մեղս ժողովըրդեան իմոյ, ասէ, կերիցեն. վասն այնորիկ իսկ ազդէ պատրաստ կալ, թէ՝ Ընդ մինչ չէ էք ննջեցեալք, ոյք ուտէք զհաց ցաւոց ։ Տեսանե՞ս զզօրութիւն կերակրոյն. քանզի և այլոյր յայտնագոյն զգուշացուցանէ քեզ զպատուէրն հրաման տալով, թէ՝ Հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ հաշիւս տալոց են ընդ ձեր ։

‘‘Ընդ ընդհէր զայնպիսի ծանրութիւն ձգես ի քեզ և զոյժս անհնարինս, որ զկէս դիշերն թերևս այրեցութեան պարապիցես. Թողուա՛ ասել զայլն, եւս և յորսայս անկեալ պարպահիցին ընդերքդ՝ թաւելովն և թառանչելովն, և ի պղտորութենէ որովայնին յորձանաց և սաստիկ գոլորշեացն, որ և զձայնն անգամ լսել պաշտաման դժուարանայցես, Թող թէ հակիլ և աքնութեան պարապել ։

‘‘Ընդ որպէս հեռի ես ի վաստակոցն աշխատութենէ, հեռանալ պարտիս և ի վարձուցն յափշտակութենէ, և քոյովդ շատանալ. դու աւադիկ զանց արարեր ըզձառեցելովդ որբոցն և այրեաց և տնանկաց, և որ ոք այլ կամիս տալ զկնի քո. քանզի և յաղագս նոցա ապաւինութեան է գանձն աստուածային, որպէս վերագոյնն ասացաք. զի և նոքա մասնաւորք են, զորըբս և զայրիս ընդունի Տէր։ Եւ թէ՝ Ընչ նորա ի տանիկս հային։ Կարդասցին, ասէ, առ իս, և ես լուայց նոցա ։

‘‘Ընդ ընդհէր զնոսա կացուցանես քեզ ոսոխս և չամաչես. զմուրոյ հացիկն թէ ունէր առաջի քո, գարշէիր թերևս և անարգանս համարէիր զառնուլն. և զինչ անխղճաբար կորզել, և ոչ կասկածես, եթէ հաւասար է այնմ մուրոյ. նոքա կողկողին զառաւտանան և զնեղութիւնս և զվշտս իւրեանց պատմելով, մինչև ցամաքին լեզուքն ի բերանս և վտանգին. զըվերս և զնեղութիւն մարմնոցն մերկացեալ ցուցանեն. երիթացեալք, բրդգեալք, դողան, սառուին՝ զի գէթ հուն այնպէս ինչ գտանել կարասցեն ծածկոյթ առնել առականացն իւրեանց ։ Եւ դու անիրաւ և դրուագեալ բանիւք զնոցայն շուկելով, ի մռայլոնն կամիս դարձուցանել. զի փութաս այրի առնել զկին քո և որբ՝ զորդիսն, մուրող և թափառական. զի կողկողին առ դրունս վտաթարաց. և ապա յիշեցէք զբանն Տեառն Յիսուսի թէ՝ երանելի է տալն մանաւանդ քան զառնուլն ։

‘‘Լ՚սան որոյ աղաչեմ և վկայութիւն դնեմ ձեզ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի, որ դատելոցն է զկենդանիս և

զՎեռևալս ի յայտնութեան իւրում և յարքայութեան, զի մի՛ ումեք եղեցի թեր զտանիլ ի մասինս յայսմիկ, զոր պատուէր տալով ուսուցաք զօգուտն և զպայծառութիւն հոգւոց և մարմնոց. և զի՞նչ օգուտ մեծադոյն քան զայն կայցէ, կամ զուարճացուցանող խնդութիւն, յորժամ Եպիսկոպոսն ըստ Ասուածոյ հաճոյիցն խնամ տանի Եկեղեցւոյն, և դասք պաշտօնէիցն գովութեամբ յորդորել զԱստուած գեղգեղելով հնչեցուցանիցեն, և այլքն առ հասարակ գումարեալք՝ փառս տացեն ամենայաղթ Տէրութեանն. որք և այրիք յանձանձեալք՝ այնպիսի կարգաւ բանական ղենին բանալ զողորմութեան դրունն. երկինք ամբարական լինելով ցողոյ, երկիր ցօրենուց, գինւոյ և իւղոյ, պաճարանոց գալարազարդութեամբ և բոլորովիքն իսկ ըզձալի կենաց իշխանաց և թագաւորաց։ ,,

Ընտաքոյ այսոցիկ երկուց կանոնական ընդհանրական ասացեալ թղթոց սրբոյն Սահակայ գտանին յընդարձակ կանոնադիրս և այլ կանոնք գլխակարգութեամբ յանուն նորա, զորոց զհամառօտսն յաւաջ բերէ Ջամչեան օրինակ գայս։

Ա՛սան Եպիսկոպոսաց և Քորեպիսկոպոսաց։

ա. Իմաստունք և եթ ձեռնադրեսցին Քորեպիսկոպոսք։

բ. Քորեպիսկոպոսք ուշ դիցին, զի սուրբ սեղանն խորհրդոյ զարդարեալ պահեսցի. և անպակաս լեցի առնջի նորա լոյս ճրագի։

գ. Միբձ սեղանոյն կամ յաւանդատան լեցի մկրտատուն, յորում լոցէ աւազան մկրտութեան։

դ. Պարգեալ սաղմոսերգութիւնք անխափան կատարեսցին Եկեղեցւոջ։

ե. Յամենայն ժամ հսկեսցեն ի վերայ պաշտամանց Եկեղեցւոյ, և յամենայն տարւոջ շրջեսցին ի թեմս իւրեանց տեսանել, թէ որպէս կատարին ժամերգութիւնք յեկեղեցիս, և ուղղեսցեն։

զ. Եթէ տեսցեն զոք յերիցանց կամ ի կղերիկոսաց յուշացեալ ի պաշտամունս Եկեղեցւոյ, պատուհասեսցեն։

է. Եթէ գտցեն յեկեղեցականս զարբեցող ոք, կամ անառակ և կամ պղերգ, ոլորշեսցեն ի կարգէ պաշտօնէից։

ը. Օգուշասցին զի պոռնկորդիք և երկկինք մի՛ եղցեն յաստիճան կղերիկոսութեան։

ը. Մի՛ իշխեսցեն կեղեքել զժողովուրդս։

ժ. Ամեսա գնացիւք վարս ուղիղս յանձին ունիցին յօրինակ այնոցիկ, որ ընդ ձեռամբ նոցա լցեն։

Ա՛սան Քահանայից։

ա. Քահանայք մի՛ լեցին տգէտք կամ ցոփք։

բ. Քահանայք վտիտ տարցին տալ ուսուցանել զմանկունս իւրեանց։

գ. Կլեսուր քահանայն միշտ կացցէ յեկեղեցւոջ. իսկ այլք շաբաթ առ շաբաթ փոխանակաւ։

դ. Ի մկրտել քահանային մի՛ սպասաւորեսցէ քահանային կին ոք։

ե. Ի լինել քահանայի՝ սաղկաւագունք մի՛ մկրտեսցին։

զ. Պատարագիչ քահանայն կացցէ յեկեղեցւոջ ի տան կլեսուր քահանային։

է. Գլխաւոր քահանայն կրկին առցէ ձեռնադրութեան հասիլ:

ը. Յաւէնայն ամի յիւր գաւակին առցեն քահանայք զԱրեւտն ի Մեծ Հայրապետէն (այս ինքն յընտրանական Կաթուղիկոսէն):

թ. Ծվարագոյր սեղանոյն մի՛ յանդգնեսցին առ քահանայք յառաջատս հարսանեաց, և մի՛ զսկիհս յանօթ լմնելոյ. և որ զայս արասցէ, լուծցի յամենայն կարգէ:

ժ. Վահանայք մի՛ իշխեսցեն գործակալութիւնս առնել ի տունս աշխարհականաց:

ժա. Գերեզմանք քահանայից լեցին առ հանգստարանի ժողովրդականաց. և մի՛ վասն պատուոյ ի մէջ ներկեցուց ի տեղիս արբութեան:

ժբ. Վահանայք մի՛ տարցեն զարբութիւնն ի տունս աշխարհականաց, և անդ տացեն նոցա, բայց երթ ի վասն հիւանդաց:

ժգ. Ուսուցցեն զժողովրդականս զգուշանալ ի չարէ. և զանուզգայնն պատուհասեսցեն:

ժդ. Օգտայս մի՛ պակասեսցեն:

ժե. Այնպէս և զչափահասս, երթէ չէցեն հաւանեալ ընդ միմեանս:

ժզ. Վննեսցեն զգուշութեամբ զի մի՛ խարդախութիւն ինչ լեցի, կամ բռնութիւն ծնողաց ի պակիլ որդւոց նոցա:

ժէ. Մխաբան կատարեսցեն զպաշտօնն:

ժը. Երթէ զիտասցեն, թէ ոք կերեալ ինչ լցէ ի տան և կամեսցի հաղորդիլ՝ մի՛ հաղորդեսցեն զնա:

ժթ. Օտար նուիրաց ընծայեալս քահանայից Եկեղեցւոջ, աշխարհականք մի իշխեսցեն բաժանել յիւրեանս:

ի. Օհասս Եկեղեցւոյ՝ զորս ըստ սահմանադրութեան նախնեաց սովոր են աշխարհականք առ քահանայից, մի՛ ծախեսցեն ընդվայր:

իա. Մի՛ թոյլ տացեն քահանայք գինեբուս առնել ի տեգս մեռելոց, և կամ կոճ դնել և աշխար առնել:

իբ. Վահանայք զյանցուցեալսն ի ժողովրդենէ իւրեանց մի՛ առանց քննութեան մերժեսցեն ի բաց, և մի՛ պատուհասեսցեն զժողովուրդս այլոյ քահանայի:

իգ. Կրօնաւորք և վանականք մի՛ խառնեսցին յիրս աշխարհականաց, այլ յամենայնի հրաժարական կեանս ունիցին:

ԳԼ. Ե.

Երկոյզ ժողով ԱՇԽԱՐՀԱՍՈՒՐ ՅԱՆԱՐԵԼԱՒ ՅԱՒԵՏՆՈՅ ՊԵՏԻՆ Սահակայ և ազգին Մեսրովբայ վասն ընդունելոյ զքաղկեդոնական Եփեսոսի և հերձելոյ զկնի ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՄՈՒԵՍՏԱՑՒՈՅ՝ վարդապետին Նեստորի:

(Ամք 8 հառն 435): Ժողովն երկրորդ ԱՇԽԱՐՀԱՍՈՒՐ վասն ընդունելոյ Հայաստանեայց զժողովն Եփեսոսի, մի անգամ դառնութեամբ արարեալ սրբոյն Սահակայ առ ժամանակակից պատմագիրս մեր՝ և ոչ երկիցս, որպէս պնդէ Մխիթ. վարդապետ Գանձեան յամս Տեառն 432 և 445. որ թէև վկայ կոչէ զայսմ Հայոցն վերիպանաց իւրոց զանուանս յիշեալ ազգային մերոց պատմագրաց այն է Մովսէսի Խորենացւոյն և Ղազնոյ Նորին ազգակցի, բայց զբանսնոցին ոչ յառաջ բերէ ըստ սովորութեան իւրում ի հաստատութիւն բանից իւրոց, զի մի՛ յայտնեսցին սխալանք իւր, և անհաւատի սեղկութիւնքն յառաջ բե-

բևաշ նորա ի բանից սինհոդոսաց Լաոինացւոց որպէս ինքն ասէ, և հրևեսցի սըտուէթիւն երկիցս նամակադրելոց սրբոց հարց Յովղովոյն առ այն առ մեր սուրբ Սահակ. զորմէ սաորև։

Յերկուց անտի պատմագրաց մերոց Ժամանակակցաց սրբոյն Սահակայ Խորենացին Մովսէս ըստ իւրում համառօտագրութեանն զայսչափ ինչ գրէ յաղագս Յովղովոյն Եփեսոսի, առանց յիշատակելոյ և զժողովն առնել սրբոյն Սահակայ և Մեսրովբայ առ այս ԱՇՀԻՇատ, թէ ''վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի (ԱՆփեսոս) մեծն Սահակ և Մեսրովբ, զրեն առ նոսա Կիւրեղ Ղէքսանդրացի և Պրոկղ Կոստանդնուպօլսի և Ընկակ Մելիտինոյ Եպիսկոպոսք, զդուշացուցանելով զնոսա. քանզի լուան եթէ ունէք ի չարափառացն աշակերտաց առեալ զգիրսն Թէոդորոսի Մամուեստացւոյ զվարդապետին Նեստորի և զաշակերտին Թէոդորի՝ գնացին յաշխարհն Յոյց։ Եպա ևկեալ Թարգմանիչքն մեր . . . գտին զմեծն Սահակ և զՄեսրովբ ԱՇՀԻՇատ Տարոնոյ, և մատուցին զԹուղթան և զկանոնս Յովղովոյն Եփեսոսի՝ վից սահմանեալ կանոնաւ գլխով, և զսաղմ օրինակս գրոց,, (այս ինքն Ընտուածաշունչն)։,, Գիրք. Գ. ԿԸ։

Իսկ կորիւն՝ որ մի ի յիշեալ Թարգմանչացն էր բերողաց զԹուղթս Ժողովական հարց ի Կոստանդնուպօլսոյ առ սուրբն Սահակ, պարզաբար իսկ գրէ զերկրորդ Ժողովոյն ԱՇՀԻՇատայ, ուր սուրբ հարքն մեր որպէս ընկալան զսուրբ Ժողովն Եփեսոսի ընդդէմ Նեստորի մարդապաւանին, նոյնպէս և հերքեցին զդրուածս Թէոդորոսի Մամուեստացւոյ, յասելն։

''Յայնմ ժամանակի բերեալ երևելեան ի Հայաստան աշխարհին գիրք սուտապատում ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրուհն Նոռոմի, որում Թէոդիտոս անուն. վասն որոյ Միւնհոդոսական Հայրապետացն Նկեղեցեաց սրբոյ նշանակեալ ապր առնէին Ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշտոցի. և նոցա Ճշմարտասէր փութով դպին ի միջոյ բարձեալ աշխարհահալած արտաքոյ իբրևանց մերժելին, զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ սատանայական յարիցէ,,։

Զայս հաստատէ և Յովհան Իմաստասէրն կոչեցեալ Հայրապետ ի պատմութիւն ազգային Ժողովոյ գրեալս լինելնէ ի սրբոյ Լուսաւորչէ անտի մերմէ մինչև ցինքն. որ արար զժողովն ի Մանազկերտ, այսպէս ասելովն։

''Ներկրորդ Ժողով արար սուրբն Սահակ և երանելին Մեսրովբ ԱՇՀԻՇատ, յորժամ հասին թուղթքն ի Միւրղէ և ի Պրոկղէ, որք ԱՆփեսոս երկու հարիւրքն Ժողովեալք, յորժամ զփառքն ի բարձունս կարգեցին, յաձախելով ի բանս հովուացն պարսպելով ընդդէմ Նեստորի անիծելոյ,,*)։

(*) Այսօրինակ վկայի գարձեալ և ի պատմութիւնս Ժողովոյ, որ գրեցաւն յետ մահուան Մովսէս Կաղանկատուացւոյ. ի Ժողովն Դվնայ, յորում էին Թէոդորոս Մարզպետական Եպիսկոպոսս և այլք, զոր ունիմք յառաջ բերել ի տեղոջ իւրում. (ի ձեռագիրս)։ Վկայէ այսմ և Մխիթար Գօշ ի Թուղթն իւր առ Զաքարէ սպասալար յաղագս Ժողովոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ. (ի ձեռագիրս օրինակին)։

Յայսցանէ ահա յայտնի երևի ղն սուրբըն Սահակ ոչ եթէ ի Մաքսիմիանոս պատրիարգէն ընկալեալ էր զԹուղթ և զիանոնս սուրբ Յողովոյն Եփեսոսի, այլ ի Կիւրղէ և ի Պրոկղէ ընկալաբ զդիրս և զիանոնս. ընդ որ և ինքն հանդերձ Մեսրովբաւ երանելեաւ երկրորդ անգամ Յողով արարեալ Աշտիշատ Տարոնոյ, ընկալաբ զիանոնս սրբոյ Յողովոյն և խոստովանեցին ըստ Կորինացւոյն բանի՝ մի որդի Աստուծոյ՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուածածնին՝ զամենասուրբ կոյս Մարիամ, և մերժեցին զՆեստոր և զաղանդ նորա. մերժեցին նոյնպէս և արտահալած արարին ի Հայաստան աշխարհ ըստ դրելոյն Կորնոյ՝ զդիրս Թէոդորոսի Մամուեստացւոյ. և զՓառս ի բարձունսն ընկալան և կարդեցին ի ժամակարգութիւնս Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Ուստի երևի ի վերոգրելոցս հաւաստեաւ, եթէ Միքայել Ղամչեան յանտոյդ աղբերաց իցէ առեալ զսուտ տեղեկութիւնսն և խանդարեալ այսպէս զբնաւոյդ պատմութիւն Յողովոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ ընդդէմ ժամանակիւ պատմադրաց աղգիս երկիցս դնէ արարեալ Յողով սրբոյն Սահակայ Աշտիշատ բաց յառաջնոյն, վասն Յողովոյն Եփեսոսի. և թէ զերեալ իցեն Թուղթս նախ Մաքսիմիանոս և ապա Պրոկղ Կպղիկոպոսք Կոստանդնուպօլսոյ առ մերն Սահակ Հայրապետ: Որում և անբնաբողոքաբար հետևող երևի Միքայել Սալմանթեան, դնելով յարկւսակի պատմութեան Յողովոյ երկրորդ և երրորդ Յողով Աշտիշատ յանուն սրբոյն Սահակայ (ի տպագրեալ աղբւսակն):

ԳԼ. Ը.

Ե՞ւ ԶԷն Յողով ի Հ՞ահապիվան, ա՞ր եղեան կանոն+ պո՞ւհանայ վասն օրինադանցից:

(Ընդ Տեառն 447): Ի միջոցի հօրն ամանց մահուան սրբոյն Սահակայ և Մեսրովբայ ի սկզբան վերդմման սատանութեան հանդերձ Հայաստանեայց յերեսաց Յազկերտի արքային Պարսից, յորում ժամանակի և բարձեալ էր ի նորոյ թագաւորութիւն Երշակունեաց, մանալ էին արդէն յոմանս յեկեղեցականս Հայոց և յաշխարհականս մեծամեծ անկարգութիւնք ի տեղիս տեղիս. սակս որոյ և վարդապետք ժամանակին և նախարարք աղգիս հասեալք առ Յովսէփ Կաթուղիկոս, որ յաշակերտութենէ սրբոյ Թարգմանչացն էր, խնդրեցին ի նմանէ առնել Յողով ի դարման չարեացն յեօթնևերորդում ամի Հայրապետութեան նորա:

Ուստի նա խորհրդով Եւագանեան ընդնորընծիւղ չարեացն կամեցեալ ի բաց խլել զորոմն ի բազմաց արտից, արար Յողով ի Հ՞ահապիվան մերձ յաւան Խաղեան որ ի Խաղեանդ գաւառի ի անհմանակցութեան Կաղկոտն գաւառի ի տարեմտի Հայոց յամենայն Նաւասարդի յաւուր ոճնի սրբոյ Կարապետին, յորում էին քառասուն Եպիսկոպոսք, ըստ գրելոյ իմաստասիրին Յովհաննու ի պատմութեան Յողովոց, և երիցունք և վանականք և սարկաւագք ոտիտ Եկեղեցւոյ. որոյ ընդ պատմութիւն և զիանոնս եղեալս ի նոցանէ ի նոյն լուծիւն առաքելական և Նիկիական կանոնաց հաստատութեան, որպէս գրի ի սկիզբն նոմոգրութեան յիշեալ կանոնացն, ամբողջութեամբ յա-

ռաջ բերեմք աստանօր ի ձեռագիր կանոնագրաց, առանց երկրորդելոյ մեր զայն։

‘‘Սահմանք և կանոնք զոր եդին Ա֊պրպոպեծք Ասիոյ ի ԸՐՒ֊ԼԼԻ֊ն առաքելական և Ընկկեղեցական կանոնաց հաստատո֊ՂԵԱՆ,,։

Նախաբութիւն.

‘‘Պարտ և պատշաճ է նաւավարին հոգալ զերս նաւին և զշաւիղս ծովուն նկատել, և ըստ հոլմոյն յայտնութեան գնալ ի վերայ մկանանց ծովուն. նոյնպէս և զօրավարին յամենայն ժամ զլօրան տեսանելով և ի հանդիսի անցանել զայրընթիր, զձի ընտիր, զղէն զանձամբ և ապա սպառազէն զերիվարսն, ակն ունել ճակատուն յարձակող գտանիլ, և առնուլ զպատկն ի թագաւորէն. ապա առաւելապէս արժան է վարդապետաց Ընկեղեցւոյ, հովուաց և Առաջնորդաց արդարութեամբ և ատոյգ պատուիրանին Աստուծոյ կենդանւոյ յամենայն ժամ յօրէնսն Տեառն խորհիլ ի տուէ և ի գիշերի, և զմանկունս Ընկեղեցւոյ նորափուռուր զարդարել ի Տէր,,։

‘‘Յետ վոխելոյն յերկրէս վարդապետաց հարցն սրդարոց և ճշմարիտ օրինդիր առաջնորդացն, մանաւանդ սրբոյ քահանային Սահակայ Ժողոց Կաթուղիկոսի և հոգևից հոգևիր ճշմարիտ վարդապետին Մեսրովբայ՝ որ լուսաւորեաց զերկիր Ժողոց, ի վիճակել նոցա յերկրէս, լինէր եղծումն և քայքայումն կարգաց և օրինաց սրբոյ Ընկեղեցւոյ, որպէս տեսանէր յառաջագոյն ի տեսլեան քահանայապետն Սահակ, և կամ ևս յառաջ՝ մեծն Գրիգորիոս. և բազմանային, որք յաճախէին ի գործս պղծութեան և յեաս ընդդէմ զբնացից. ի չամաքել սէրոյն բազմանայր անօրէնութիւնն, և ոչ ոք էր որ քաղէր զորոմն և կտրէր զդաշն ընտրակար. քանզի արմատացեալ էր սէգն և տարածէր օր առաւր և լինէր յաճախութիւն մծղնէից, կնահանից, պոռնկաց, անձնակամաց, գողոց և ամենայն չարագործաց յաշխարհին Ժողոց ի մէջ ազգն Թորգոմայ, և լինէր սուգ և արտմութիւն որ էին ի ժամանակին Ա֊րդապետք, Եպիսկոպոսք և երիցունք և ոչ ունէին զուխտ սուրբ՝ պաշտօնեայք Քրիստոսի և մանկունք Ընկեղեցւոյ սրբոյ,,։

‘‘Եւ և յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան ձանապարհին, և մանաւանդ զի ոչ էր ի ժամանակին յայնմիկ իշխանութիւն ի ձեռս նախանձայոյզ ազգին Մամիկոնէից, զի հնազանդեալ էին համարձակելոց Պարսկաց թագաւորութեան. զի թէպէտ և հեծէին և մանչէին ի նմանութիւն կռուանց առիւծոյ Ա֊րդանն Մամիկոնեան ազգաւ իւրով հանդերձ հղբարբք, այլ կային իբրև ի գառագղի արգելեալք, և ակն ունէին վերին օգնականութեանն, և ասային զնշանութիւնն ի ձեռս նոցա,,։

‘‘Ապա օր աւուր բղխէ զբան և զիշեր զիշերի ցուցանէ զգործն արդարութեան, բան առ բան հասանէր, և մարդ ի մարդոյ հնչէին լինէր յիւրաքանչիւր լսելիս. և գային, ժողովին ի հրամանէ միաբանութեան յեդեալ կէտն ի Շահասլիվանի՝ բանակուող թագաւորացն Ժողոց ի ժամս նորաբեր Տօնին,,։

‘‘Եւ լինէր այս ի ԽՀ. ամի թագաւորութեանն Յազկերտի Պարսից արքայի և Ա֊ստակայ Սիւնւոյ մարզպանին Ժողոց

և վ֊ահանայ Ամատունեայ հազարապետի և վ֊րուայ Խոսխոռունեայ Աղխաղի. և զային ժողովեին Եպիսկոպոսք քան և երիցունք բազումք, սարկաւագք և նախանձայոյզ պաշտօնեայք Քրիստոսի և համօրէն ուխտք Եկեղեցւոյ՝ իշխանք, զաւառապետք, գաւառականք, պետք, բըռնաւորք, զօրագլուխք, հարիւրաւորք, ազատք, կուսակալք կողմանց կողմանց մեծ աշխարհին Հայոց, նախարարք ամենայն առաջի վ֊ասակայ մարզպանի և վ֊ահանայ հազարապետի և վ֊րուայ Աղխաղի, և առաջի գլխաւոր եպիսկոպոսաց՝ վ֊ազգայ, Տաճատայ, Երատակայ, Գատայ, Եփրեմի և այլոց բազմաց երիցանց գլխաւորաց՝ Յովհաւիայ, Յովհաննայ, Մեզտեայ, Երեմիայի, Ասպարուկայ, Դանիէլի, վ֊եւանդի սրբոյ, Եղիշէի գրան երիցու և այլոց սրբասէր քահանայից, որք էին նախանձախնդիր օրինացն՝ առաջի աւագ նախարարացն քաջին և կորովչայն վ֊արդանայ Մամիկոնենւոյ և Երշաւրայ Կամսարականի և Մանաճիհրի Ուշտունեայ սպարապետին Հայոց և Օկայ Դիմաքսենի և այլոց նախարարաց, որք միաբանեալք էին և հաւանեալք արդար օրինաց և քրիստոսական պաշտամանն, և միաբան բարբառէին այսպէս, եթէ՝

«Օգնեալ զկարդն սրբոյն Գրիգորի և ընտրեսի և զԱհակայ և զՄաշտոցի դուք այդրէն հաստատեցէք, և այլ ևս լաւ, որպէս ձեր կարք են, և մեք ախորժելով յանձին ունիմք. զի կարգք Եկեղեցւոյ թուլացան, և մարդիկ յանօրէնութիւն դարձան. արդ որ օրէնք Աստուծոյ — հաճոյ են և Եկեղեցւոյ, դուք զայն կարգեցէք, և մեք հնազանդիմք. և եթէ ոք հաստատուն ոչ պահէ զկարգս օրինացն Եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ, կամ շինական՝ պատուհասի և տուգանս տացէ»։

«Եւ զայս ասացեալ քահանայապետիցըն, եթէ Ասաքելականն և Նիկիականն հաստատեալ կացցէ՝ որպէս և էն իսկ, և մեք հնազանդ եմք. բայց որ ինչ պիտոյ է ի կրօնութիւնս ինոյն կանոնս, և մանաւանդ ի մէջ տանս Յորգոմայ՝ հաստատեցի։ Ապա կարդեցին և կոչին այսպէս»։

Սահմանք և կանոնք զոր եդին վ֊արդապետք Հայոց՝ ի նոյն կրօնութեան Ասաքելական և Նիկիական կանոնաց հաւատացուածեան։

ա։ Եթէ Եպիսկոպոս ոք գոյցի ի պղծութեան և կամ ի պոռնկութեան և կամ զկին և իցէ վատթարութեան, և զառաքելական պատիւն անարգեաց և ըմսուրբ Ընծան, այնպիսուն ասէ զիր, Ընդ դոյզ ընթանայիր, ընդ շունն դնէիր զվճռական քո, և վկայութեամբ ի յայտ եկեսցէ, յանդուգն ի բաց մերժեսցի և զքահանայութիւնն մի պաշտեսցէ, ՈՄ. զբռամ ի տուրբ Ընծան տուգանեսցի, և անձին իւրում լեցի մեղադիր. քանզի Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ. և զտուգանն կարօտելոց բաշխեսցեն. զի պարտ էր նմա յամենայն ժամ յօրէնս Տեառն խորհիլ և մի զարատուղն անկանիլ, և մի աշակերտեալք զնոյն մատուսցին։

բ։ Երէց որ գոյցի ի պղծութիւն կամ ի պոռնկութիւն, կամ յայլ վատթարութիւն, և վկայութեամբ իրքն ի մէջ եկին, զերիցութիւնն մի պաշտեսցէ, երեք հարիւր դրամ տուգանեսցի յաղքատս, և

նա ի դպրաց կարգի կացցէ. ապա եթէ ի դպրութիւն ի նոյն պղծութիւն գոյի, ի կարգէն ելցէ և ի դպրութենէն կինաց, մինչև ի կարգ ուղղութեան եկեսցէ ապաշխարութեամբ: Եւ սեռակալ Եպիսկոպոսին ձգանապարհն նորա, ի դպրաց կարգ մոցէ: Երիցու և սարկաւագի կանոն՝ այդ կացցէ. զի եկեղեցի և սուրբ սեղանն, մանաւանդ Տէրունական խորհուրդն զանարատս ընդունի, զի մի՛ բարկութիւնն Աստուծոյ զարթիցէ ի վերայ երկրի ի ձեռն Առաջնորդի:

Եթէ կնաւ երէց գոյի ի պղծութիւն և կամ յայլ գործս և ստուգեցաւ վկայիւք, քահանայութիւնն լուծցի, և յեկեղեցւոյ բաժնէ հեռասցի. երիք հարիւր դրամ տուգանս տացէ ի կաթուղիկոսս. թէ երէց թէ սարկաւագ՝ կանոն այդ լեցի. և նոքա ի զինուորաց կարգի կացցեն ի բաժնի և ի հարկ արքունի. և ընդ պաշտօնեայս մի՛ խառնեսցին: Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութիւն գոյին, ընտրոյ տէրքն նոյն լեցին. կամ զեկեղեցին ընտրեսցին և զքահանայութիւնն, կամ զկինն. եթէ զքահանայութիւնն, զկինն ի բաց թողցէ, ապաշխարութիւն խիստ ի վերայ դիցեն:

Ապա թէ դաւսար քահանայի գոյի ի պոռնկութիւն, եկեղեցւոյ բաժնի մի՛ իշխեսցէ. և խիստ ապաշխարութիւն դիցեն և պատուհաս. և որդւոց երիցու նոյն լեցի. եթէ երէցն մեռցի, կինն առն չելցէ լինել, նոյնպէս և երէցն: Եւ ազախին պոռնիկ ի քահանային առն մի՛ լեցի, զի սրբութիւն Տեառն է:

Գ. Եթէ ոք կին ունիցի և պոռնկիցի, և զկարգ ամուսնութեանն սրբութեամբ ոչ պահիցէ . . . զայնպիսին կշտամբեսցին զխաւարըք գանիւք և բանիւք օգտակարօք և յեկեղեցւոյն հանցեն . . : Եթէ ազատ է և գան չմարթի հարկանել ի տուգանն և յապաշխարութիւնն յաւել երկու հարիւր դրամ յեկեղեցի, երկու հարիւր դրամ կաթուղիկոսաց, երկու ամ ապաշխարութեամբ, ապա մտցէ յեկեղեցի՝ ընդ ընկերս խառնեսցի: Եթէ չինական, գան յոլով արբոյծ, հարիւր դրամ տուգանս տայցէ յեկեղեցի և յաղքատս, և ի ամ ապաշխարեսցէ . . . մտցէ յեկեղեցի. եթէ այր, եթէ կին՝ կանոն այդ լեցի . . : Այս կանոն լեցի նա և կուսի և երիտասարդի. ևն:

Դ. Եթէ թողցէ ոք զկին իւր առանց բանի պոռնկութեան, կամ վասն արատոյ մինչ ի մարմնի, զորդիսն և զկեանսն և ըզհող և զջուր բաժանեսցին, և զկէսն կընոջն տացեն. և եթէ կամք են այլեւս լինել, համաձակ զբաժինն կալցեն և զարքունի հարկ ողջ արասցեն. և այրն որ եթող, եւթն ամ ապաշխարեսցէ, և յեկեղեցի տուգանս տացէ. եթէ ազատ է, երկու հարիւր դրամ. եթէ չինական, գան արբոյծ և հարիւր դրամ յեկեղեցի՝ փոխանակ զօրհնութեան պսակն խոտեցոյ:

Ե. Եթէ կին արար ոք, և կինն ամուլ պատահեաց, և այրն հանցէ վասն ամլութեանն, որ մինչ կնոջն բերեալ էր ի տունն . . . առնուլ իշխեսցէ և գնալ. եթէ քան զամլութիւնն այլ արատ չկայ, տուգանն և տացէ կնոջն վասն անարգանացն, եթէ ազատ է, հազար երկու հարիւր դրամ, եթէ չինական՝ հազար դրամ . . : Ապա եթէ առնն յառաջագոյն խոտեցէր զիւր կինն թողուլ և զայլ առնուլ և

կամ պոռնկեալ էր ընդ նմա, հարիւր ղեբրամ այրն տացէ յեկեղեցի. և ապաշխարութիւն առնուն երիք ամ ընդ ունկնդիրս, մի ամ ընդ ձեռամբ. մտցէ յեկեղեցի . . :

Ղ. Ընդգամ կանանց որ յառնէ ելանիցեն, զկինն կալցեն և ցայրն տացեն . . : Ապա եթէ այրն շնաբարոյ է կամ պոռնիկ . . . դանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն և հնազանդեցուսցեն. եթէ ազատ է, տուգանօք զայրն ի կարգ արկցեն. եթէ դիւրաւ փոխեսցի այրն, կինն պաշտեսցէ զնա:

Է. Որ բռնութեամբ և անիրաւութեամբ առևանգեն, կալցեն զկինն և տացեն ցքհայր և ցմայր, և տուգան տացեն փոխանակ անարգանացն. եթէ ազատ է, և եթէ շինական՝ հազար դրամ . . : Ապա եթէ սուտ վեճայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակի, տուգան կալցեն յեկեղեցի: և երիք ամ ապաշխարեսցէ: Ապա եթէ երէց ոք զաղտ պսակ եդ առանց հօր և մօր աղջկանն, երէցն զքահանայութիւն մի՛ իշխեսցէ վարել և հարիւր դրամ տուգանեսցէ կաթողիկոս. և պսակն անվաւեր լինիցի: Ապա եթէ յետ խոստովանութեան և տուգանաց դարձեալ ի հաւանութիւն գան . . և յառաջ պոռնկեալ իցեն, պըսակ մի՛ օրհնեսցեն, այլ երկրորդի ուռ օրհնեսցեն. ապա եթէ կուսանք կացեալ իցեն, պսակ օրհնեսցի: Թէ ազատ, թէ շինական՝ կանոն այդ կացցէ:

Ը. Եթէ ոք ի կախարդութեան գայի կամ յուբացութեան և կամ յայլ ի չար գործս, և ի զղջումն և յապաշխարութիւն ոչ եկեսցեն, ըստ գրոց հրամանի քարկոծ լեցին. ապա եթէ խոստովանեսցի, մինչև յմահ իւր ապաշխարեսցէ, տասներկու ամ ընդ ունկնդիրս. և մտեալ յեկեղեցի, ելցէ ընդ ապաշխարողսն, մի՛ լոկ ի Վառաւաներորդսն, այլ յամենայն ժամ. և քննեալ հետքն ի ձեռն ողորմութեան բազում ինչ ծախել ի կաթուածալս վասն փրկութեան անձին իւրոյ, ջերմ արտասուօք զյանցին թողութիւն առցէ:

Ը. Ոք ի հարցուկս և ի դիւթս երթան, տուգան կալցեն. եթէ ազատ է՝ երկու հարիւր դրամ. եթէ շինական՝ գան արբեցէ տասն և հինգ կրկին. հարիւր դրամ տուգան կալցեն, և կաթուածելոց տացեն. երիք ամ ապաշխարել՝ հաղորդեսցին: Ապա եթէ եպիսկոպոս կամ երէց երթեալ իցէ ի հարցուկս, և տուգեսցին իրքն երկու կամ երիք վէրայիւք, . . . եպիսկոպոսն յեպիսկոպոսութենէն անկցի, և երէցն յերիցութենէն. հազար դրամ եպիսկոպոսն տուգանեսցի, և հինգ հարիւր երէցն . . . : Ապա եթէ ի կարգէ պաշտօնէիցն և յուխտէ Ընդեղայից երթեալ իցեն ի հարցուկս, կամ որդի երիցու, զպատուհաս, և զտուգան և զապաշխարութիւն աշխարհականացն կրեսցեն, և ի կարգէ պաշտօնէիցն ի բաց ելցեն: Եթէ այր, եթէ կին՝ կանոն այդ լիցի:

Թ. Որ ի դիւթութեան գայցին, զոր կրկին գան արբեցեն, խանձեսցեն, մրեսցեն ոսկերս արկցեն, և յուրկանոց տարցեն, և երկու ամս ապաստէ գոլեսցեն . . : Եթէ ազատ է և ի գողենոց չերթայ, երեսուն դրամ ի գողին տացէ, և ինքն երկու ամ յիւր եկեղեցւոջն ապաշխարեսցէ և հաղորդեսցի, և այլ մի՛ մեղիցէ:

Ժա. Որ կոծ դնեն մեռելոց և անյուսութեամբ լան, թողեալ զյուսով և զօրհնութեամբ հրաժեշտն . . : Եթէ

յանգատոյ կամ ի շինականաց առաքելական կանոնիս ընդդիմացաւ և կոծ եղ, նզովեսցին դնելքն և կոծողքն. և ամ մի յեկեղեցի մի՛ մացեն. և առագան կալցին զազատին հարիւր դրամ, և շինականին յիսուն . . . :

ԺԵ. Որ զկին հօր որդի ունիցի . . . ոչ ընդունի զնա կանոնս. և ի սուրբ եկեղեցի մի՛ մացէ. և յամենայն ժողովոյն նզովեսցին մինչև ապաշխարեսցեն. Ի ամ ընդ ձեռամբ, Ի դրամ ընդ ձեռամբ, Ի դրամ աղքատաց, Ի դրամ յեկեղեցի. քննեալ զվարն՝ հաղորդեսցի : Եթէ հայր զորդւոյ կին ունիցի, զդոյն պատուհաս և նզով. եթէ եղբայր զեղբօր՝ նոյն պատուհաս : Եւ եթէ զկնքեմ հարաձատի, և զազգականի՛ մի՛ ոք իշխեսցէ առնուլ. եթէ կնոջն կամք լինին, զպատուհաս և զտուգանս և զնզովս զնոյն կրեսցէ. բայց յապաշխարութիւն կալցեն զկինն և յուրկանոց տացեն, և Ի ամ ազատցէ զոդեացըն. ապա եթէ ազատ է, Ց դրամ տուգան տացէ :

ԺԶ. Որ զազգականն կին առնու . . . զքոյր, կամ զքեռորդի, կամ զեղբօրորդի, կամ զհօրքոյր, կամ զայլ ոք յազգականին իւրում մինչև ի չորրորդ ծնունդն՝ կին առնել մի՛ իշխեսցէ, զի մի՛ պատուհասումն եղիցի սուրբ հաւատոյն. քանզի բարկութիւն անձին իւրում գործէ այնպիսին, թէպէտ առաւար եղիցի, և զտակ անօրէն անկողնոց մի՛ բաղբաջեսցի . . : Ընդ եթէ ոք ընդդիմացի օրինացս և հնազանդեալ կանոնիս, և ի հեթանոսութիւն և ի հրէութիւն կործանեսցի, ընդ նոսին լինի քաժին նոցա, և յեկեղեցւոյ հեռացեալ լինի . . : Եւ եթէ այնպիսեացն պակ ոք օրհնեսցէ, կամ ի հարսանիս երթիցէ, կըցորդ եղիցի գործոց նոցա և ի կարգէ պաշտօնէիցն հեռասցի . . : Եւ որ խոտորեցան յօրինաց և յեկեղեցւոյ, եթէ դարձցի ի զղջ ամբանութենէն, ի ձեռն մեծամեծ արտց մինչև վեց ընչից և վեց իրաց և զկենաց հոգւոց իւրեանց տացին ի կարօտեալս և ի վշտացեալս. յեկեղեցի զաւուրս կենաց իւրեանց ապաշխարել՝ ի վանձանի իւրում լինի արժանի հաղորդելոյ: Եւ զքահանայքն եկեղեցւոյն որ ի խորհրդին էին և որ զպսակն օրհնեցաք, Ը. դրամ եպիսկոպոսն, Մ՝ երէցն առագանեսցին, և ապա մատիցեն յերիցութիւն . . . :

ԺԷ. Եպիսկոպոս ոք, կամ երէց կամ սարկաւագ կամ մի ի պաշտօնէից՝ տան տիկին անուն մի՛ իշխեսցէ առնել որպէս սովորութիւն է մեծնէից. ապա եթէ ունիցի ոք և վկայութեամբ ի չայս եկեսցէ, ի կարգէն յորում է, անկցի ի բաց, և համարեսցի որպէս զամպարիշտն և զմաքսաւորն. զի սուրբ Եկեղեցի և խորհուրդն Տէրունական զանարատն ընդունի. զի ըստպատաւորք ի ձեռն նորա մերկեսցին :

ԺԸ. Օվ եթէ ոք ի պաշտօնէից և յուխտ մանկանց ի հաւատս կայցէ, կամ մեռնակեաց կամ զԼ՞նչ և է, զսրբութիւն կամ զկուսութիւն պահել, և կենացն յաւիտենից հաստանել, ընդ ընկերս կայցէ ընդ ճշմարիտս և ի միմեանց շինեսցին սիրովն Քրիստոսի . . : Որ միաձնակեաց կամի լինել և կուսան, և զհաբեղայրութիւն յանձն առնուլ, զկանոնդ զայդ կալցէ, ամենայն որ ի հաւատս կայցէ :

ԺԹ. Առանց կամաց պըհատուր Եպիսկոպոսի աշխարհին՝ Եպիսկոպոսք մի՛ լինին.

և վանաց երէց կամ անապատաւոր առանց դասաւի Եպիսկոպոսին չիշխէ լինել. եպիսկոպոս ոք, կամ երէց, կամ ազատ, կամ շինական վասն առաջնորդս կարգելոյ և հովիւս պատրաստելոյ Եկեղեցւոյ և օրինադիրս . . . թէ կարի յանտրտաց ոք է և յարհամարհելոց, և միայն նահանձաւոր սրբութեանն և օրինացն է, յառաջ կալցեն . . . :

ԺԵ. Եթէ ոք նշխարս Մարտիրոսաց կամիցի դնել, առանց Եպիսկոպոսի աշխարհին մի՛ դիցէ . . : Եթէ ոք ի տուրբ տեղացն Մարտիրոս բերէ, առ Եպիսկոպոսն բերցէ վկայութեամբ և թղթով եպիսկոպոսացն ուստի բերին, և իւրեանց Եպիսկոպոսի հրամանաւ դիցեն՝ ուր արժան է: Եւ եթէ ոք սեղան կամի կանգնել, Տէրունական խորհրդին, առանց Եպիսկոպոսին մի՛ իշխեսցէ . . . :

ԺԶ. Եթէ վարդապետի ուրուք կամ զաշակերտ կամ զժողովրդական կամ զքահանայ նզովեալ իցէ կամ բանադրեալ, այլոց տեղեաց վարդապետ կամ Եպիսկոպոս կամ քահանայ մի՛ իշխեսցէ զանիծեալն օրհնել և զբանիւ կապեալն լուծանել, բայց թէ հաւատով և ի սէրն Հոգւոյ սուրբ յուղութիւն եկեսցէ . . . :

ԺԷ. Եթէ ոք ի մծղնէութեան գոցի կամ երէց՝ կամ սարկաւագ կամ ի հաբեղայից՝ քահանայութիւնն լուծցի, ազօխնապրծի ի ձեռնադրոյն, և ի տեղի մի ձգնաւորաց յապաշխարութիւն տացին. ապա թէ զարձեալ ի նոյն գոցի, զչիլդն կտրեսցեն զերկոսեան և ի գոդինոցն տացեն . . . :

Ը. Որ յուրուք ժողովրդենէ մծղնէ գոցի, և երէցքն գիտեն և ո՛չ յայտնեն եպիսկոպոսին, եթէ յայտնի լիցին թէ գիտէր երէցն զգործս նոցա, և ո՛չ բողոքեաց եպիսկոպոսին, զպատուհասն զոր եդին կանոնք՝ կրեսցեն . . : Ապա եթէ երէցն ասիցէ ցԵպիսկոպոսն և յայտ առնէ, և Եպիսկոպոսն կարասի առնու և ծածկէ կամ աչառի . . . այնպիսին նզովեալ եղիցի և յԵկեղեցւոյ հեռասցի: Եթէ իշխան ոք ծածկեաց և թադոյց ըզմծղնեայն կամ վասն կարասւոյ, կամ վասն ակնառութեան . . . նոյնպէս նզովեալ եղիցի . . . : Կամ իշխան ոք կամ ընտանիք նորին գոցին ի մծղնէութեան, նոյնպէս նզովեալ եղիցին, և ի հրապարակ մի՛ իշխեսցին գալ . . . *):

ԺԸ. Եղեալ միաբան քահանայապետից և քահանայից և ամենայն հաւատացելոց զկարգս զայս և զկանոնս, և ընթերցեալ առաջի ամենայն զօրացն և զօրապլխաց, և հաձէին հաւանութեամբ ամենայն աշխարհն Հայոց, ասելով միաբան զօրացն և զօրապլխաց, իշխանացն և նախարարաց, ազատաց և շինականաց թէ՝ ‘‘այո՛ այո՛ կարգ և օրէն այդ կացցէ ինչ որ վասն մեր օգտի է և փրկութիւն ոգւոց մերոց, իշխանութիւն եկեղեցւոյ Աստուծոյ և մեզ առաջնորդ և առիթ ի կեանսն յաւիտենից. ամէն:

(Շարունակելի).

ԱՌՔԼ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

(*) Այս ամենայն քսանեքին կանոնք եղեալք յառաջին ժողովն Շահապիվանու, կոչեցեալք Կանոնք տուգանաց վասն օրինազանցից՝ գրեալք են օրինակօք և ընդարձակ վկայութեամբք տուրբ գրոց ի կանոնագիրս մեր, զոր ըստ այսմ համառօտեցաք.

ԳԱՒԹ ԵԿԵՂԵՑԻՈՑ.

Նոր գիւտ և առաջին անգամ չէ որ կհաչակուի թէ ո՛րն է կամ ինչ է Հայաստանեայց Եկեղեցւոյ համար նախադուռն կամ Գո՛ռն Եկեղեցւոյ համարուած և շարունակուած շէնքն։

Նիւթական եկեղեցւոյ շէնքի նիւթական բաժանման մէջն գաւիթն չհասկացուի այս, քանզի զննուրիալ Եկեղեցւոյ համար է խօսքս։

Ընդ Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ այս գաւիթը կկազմեն հոգեւոր պղպջոյնէրն։

Ո՞ւմն գէթ նմանութիւն ևս հետևիմք՝ շատ գեղեցիկ և պարզ կհասկացուի՝ որ ինչպէս առանց գաւիթը անցնելոյ ըստ նիւթական շէնքին՝ հնար չէ Եկեղեցի մտանել, այսպէս ևս ճշմարիտ և կատարեալ Քրիստոնեայ լինելոյ՝ և Քրիստոնէութիւնը քաջ ուսանելոյ համար անշուշտ պէտք է մի բարոյական գաւիթ, ուր Եկեղեցւոյ մանկունք հաւաքուին և կրթուին և հմտանան։

Ընդհատակ այս գաւիթս է՝ որ կրկանդնի Հոգևոր կամ Ծխական դպրոցաց մէջ։

Ըստ այսմ Հայրապետք և Վարդապետք և ամենայն պաշտօնեայք Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ իսկզբանէ հետ՝ ո՛ր որ Եկեղեցի կհիմնէին, ա՛ն նմին անշուշտ կհաստէին ի Ծխական դպրոց, որ Նո՛ր կանոն և աբբեական պարտ եղած և շարունակուած է ցարդ, և այսօր ամեն տեղ՝ ուր Հայք կան և Եկեղեցի ունին, անսակարկոյս մտան մի դպրոց ևս պիտի ունենան և ունեցած են և ունին՝ ինչպէս որ կտեսնուին ամենայն ուրեք՝ ուր Հայք ցրուած կան։

Հաստատուն և բնութեանց հետևակուած ժամանակներն անգամ կջանային նախնիք մեր Եկեղեցին և Դպրոցը երկուքը ի միասին պահպանել ի հարստահարութենէ։

Առաքէն ուր պէտք էր սանդիլ համայն Հայ մանկանց Քրիստոնէական սովորութիւնքն՝ երբ Ծխական դպրոցներն չըկազմուէին և չկազմուին, և մի՞թէ իւրաքանչիւր Եկեղեցւոյ որդիք պարտաւոր չեն իւրեանց հաւասը՝ կրօնը ուսանիլ և գիտենալ։ Մի՞թէ լոկ Եկեղեցւոյ պաշտօնէից ուսմունք և հմտութիւնքն բաւական կը լինին ժողովրդեան համար ևս. մի՞թէ ժողովուրդն ձեռնաքաշ պիտի իմանայ կրօնը, կամ թէ՝ եկեղեցական պաշտօնեայք կրօնապէտ լինին և ժողովուրդն տգէտ ըստ կրօնականին, և միայն եկեղեցականաց պատասան ինայ և շարունակէ իւր կրօնական պարտաւորութիւնքը՝ առանց ինքնին իմանալոյ և ընթեռնլոյ ևն։

Տակաւին չմոռնանք Ղազարները, և միայն կրօնականով կբաւականանանք, և զայն նախամեծար կընդունիմք։

Աւրիշն եթէ հոգևոր դպրոց դպրոցին կամ իւրեանց նո՛ր կան նպաստներն շնորհեն, ինչ կընի մեր Ազգի և Եկեղեցւոյ վիճակ և ուր կհանդի ապագան։

— Ընդուզած է կոպռապ կառավնորդուի՝ ուշ կամ կանուխ։

Ուստի ինչպէս Եկեղեցին նո՛ր կան և անբեռնաբաժնելի է, այսպէս զուգակշիռ նո՛ր կան և անբեռնաբաժնելի են Եկեղեցւոյ գո՛ռն եղած հոգևոր պղպջոյնէրն, որոց մէջ մեր եկեղեցական իշխանութիւն և իրաւասութիւն չըթաղոր հանդիսանալով հանդերձ՝ յաւէտ և հանապազ կապահո-

վեին Հայք ընդդէմ բազմապիսի և բազմանոլից վտանգից։

Իրաւամբ չէ՞ ասելքէն՝ որ մեր սրբազան նախնիք՝ այս ինքն Եկեղեցւոյ Հայրապետք, և ամեն եկեղեցական պաշտօնեայք զայս իրրև կրօնական խնդիր ընդունած և նուիրագործած, և ըստ այնմ սրբազան պարտաւորութիւն կալած են ինքնին հետևիլ ոչ միայն Եկեղեցւոյ պաշտօնեաներ պատրաստելոյ, այլ և Եկեղեցւոյ որդիքը եթէ ոչ բոլորն ըստ ժամանակին կարևոր եղած ուսմամբք, գոնե անշուշտ կրօնական և ազգային դաստիարակութեամբք—ինչպէս ի յաջորդ թիւս պիտի տեսնուի Հայաստանեայց Եկեղեցւոյ անցեալն վերնագրով յօդուածոյս մէջ—կրթելոյ համար, և այս սրբազան պարտաւորութիւնը աւանդած են շարունակաբար իւրեանց յաջորդաց, և զայս միշտ ամեն ժամանակ և ամեն տեղ կարևոր արժանութեամբք պաշտպանած և պահպանած են։

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ՎԵՐԱՑ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՆԻ ԿՐՕՆԻ

ՆԱԽԿԻՆ ՀԱՑՈՑ։

Մաս Ա—ջին.

Ը.—Իւր հօրն և մօրն հնազանդելու պարտաւորութիւնն աւելի քան թէ որ և իցէ ուրիշ մահկանացուի, միշտ նոցա իշխանութեան ներքոյ ապրելն, ծերութիւնը յարգելն, և նոցա խրատները որպէս պատգամ ընդունիլն, համարուելն ամեն ժամանակուայ Հայերից որպէս նուիրական և իւրեանց համար կարևոր պարտաւորութիւն։ Սկսեալ ազգի ծագմանից ընտանեացց հայրերն, բնական իրաւունքներից բացի՝ (նոքա) ունէին և տիրական իրաւունք. նոցա իրաքանչիւրը համարուած էր որպէս տէր իւր տան և իւր ժառանգներին, և ըստ սովորութեամբ այս իրաւանց նոքա կրում էին տէր և հայր մականունն։ Օր և մօր կենդանութեան ժամանակ որդիքն որպէս և հարսներն և սոցա ժառանգներն ապրում էին հայրենական տան մէջ, և (նոքա) պարտաւորուած էին յանձնելու իւրեանց ծնողաց իւրեանց աշխատութեանց և հոգացողութեանց քաւութիւնն։ Տան տիրոջ և տիրուհւոյ մահուանից յետոյ եղբայրներն ազատ էին բաժանուելոյ միմեանցից, հաւասարապէս բաժանելով իւրեանց ժառանգած բարութիւնքն կամ թէ կենակցել ի միասին, այս որ պատահում էր շատ անգամ տալով ընդհանուր գործոց վարչութիւնն երէց եղբօրը։

Ր.—Բաց ի այն իրաւունքներից՝ որ իւրաքանչիւր Հայր ունէր իշխելու իւր տան վրայ, կար նաև երկրի որ և իցէ իրաքանչիւր մարդաբնակ մասում, մի ծերունի՝ որոյ հոգն էր հսկել այն տեղի բնակչաց ապահովութեան վերայ, և դոքա կոչվում էին Նահապետ *), այս ինքն այն կողման առաջին գլխաւորն։ Օր և այդ ծերունուց իշխանութիւններից ի վեր, կար և մի երրորդն՝ ուր կենդրոնացած էր ազգի իշխանութիւնն։ Այդ էր մի գլխա-

(*) Նահապետ, բաղկացեալ նախ և պետ բառերից։ Ծ. Թ։

ետր՝ որ կոչուում էր իւրեան Պայազատ կամ Մեծ Նահապետ և որին յանձնուած էր ընտանեաց հայրերի և նահանգաց ծերերի վրայից կառավարելու ազգի ընդհանուր դործոց ամբողջութիւնը։ Այդ էր ուրեմն մի տեսակ խնամութիւն կամ թէ մի դաշնակցական ուխտ՝ որ արել էին իւրեանց մէջ իշխանութեան երեք աստիճանները։ Այս տեսակ վարչութիւնը՝ որ Հայերի ընտանեկան սովորութեանց և վարուց անհրաժեշտ արգասիքներ էին՝ յարատեւել է մինուոյն առաւել կամ պակաս տարածութեամբ, Հայկազանց, Արշակունեանց, Բագրատունեանց և Ռուբինեանց ջորս հարստութեանց կառավարութեան ժամանակ։

Արշակունեանց տիրապետութեան ժամանակ ծերերի իրաւասութիւնը կամ թէ իշխանութիւնը երկու դասի բաժանուեցաւ. առաջնոց հարստութեան ժամանակ նահապետներն էին նահանգաց հրամանատարքն, իսկ երկրորդի ժամանակ՝ դաւառաց վարչութիւնն էր ի ձեռս ընդհանուր կառավարչաց, որոնք կոչվում էին Նախարար կամ Սպարապետ։ Ի նախնումն այս գլխաւորների իշխանութիւնը ընտրովական էր, բայց Արշակունեանց ժամանակ ժառանգական եղև։ Սակայն ժողովուրդն կամ ընտանեաց հայրերն կարողութիւն ունէին խնդրելու թագաւորից նոցա ի պաշտօնէ արձակելն, և տալու նահանգաց կամ նախարարական կառավարութիւնը միւսիշ անձի մի և նոյն ընտանիքից։

Պղատոն*) իմացնում է մեզ որ հին ժամանակում ընտանեաց հայրերն վերա-

(*) Պղա. յարագս Օրին. վիր. Գ։

պետական իշխանութիւն ունէին իւրեանց որդւոց վերայ։ Հերոս մի և նոյնն ասել էր այդ փիլիսոփայից առաջ*). Հերուբէոս, Դիոտոր Սիկիլացի, և Պուսանէն**) խօսելով Ասիայի նախնական ժողովրդոց և մանաւանդ Մեդիոյ, Պարսկաստանի վերայ՝ իմացնում են մեզ որ այս ազգերն կառավարում էին ի սկզբան նահապետական գլխաւորներով կամ թէ ընտրեալ իշխաններով, որոնք բաւականանում էին մի սահմանաւոր իշխանութեամբ և որ մեծարում էին իւրեանց քաղաքակիցների և դրացիների իրաւունքներն։ Ըստ անցանելոյ ժամանակաց այս քաղաքների կառավարչական ձևն՝ որ առաջ նահապետական էր, փոխուեց և եղև բոլորովին բռնատիրական։ Բայց Հայոց պատմութիւնն՝ որպէս շատ ուրիշ հին սիասիային նահանգներն՝ պահպանեց երկար ժամանակ հայրենական տէրութեան ձևերն։

Գ.— Անկախութեան միաքն, իւր տան մէջ տէր լինելու զգայութիւնն, արուեստից սէրն, իւր քաղաքակիցների և դրացիների հետ մի խաղաղական կեանք վարելու ուրախութիւնն ձեռացնում են Հայերի որոշիչ նկարագիրն։ Նրանց ամենադարաւոր պատմութիւնն մեզ ճանաչցնել է տալիս, որ այս վարքերն նոցա մօտ եղել է մի սովորութիւն բարքի։ Հեղինակութեան սէրն երբէք չէ եղել մի տիրող կիրք այս երկրի մարդկանց համար։ Երբ որ պէտք էր պաշտպանել իւրեանց քաղաքն յերեսաց թշնամեաց, նո-

(*) Հմմ. Ոզիւս. գիր. Թ։

(**) Հերոդ. գիր. Ա։ — Դիո. գիր. Բ. գլ. 1։ — Պուստ. գիր. Ա գլ. 1։

քա մարդկում էին ամենամեծ կատաղութեամբ և մահն նորանց երբէք չէր զարհուրեցնում. բայց եթէ խնդիր էր անելու մի օտար պատերազմ, կամ ձեռ բերել նոր երկիր, յայնժամ միայն կըռվում էին պատուի համար կամ մղուած փառասիրութիւնից։ Հայաստանի պատմագիրներն անգամ տալիս են ամենամեծ գովեստ այն պատերազմողներին՝ որոնք կռուել են յարգաց ազգային ազատութեան, քան նոցա՝ որք ձեռնարկել են տարածողական պատերազմներ մօտաւոր երկիրներում։ Եթէ Հայ զինուորներն գըտանվում էին իւրեանց քաղաքից դուրս, յոյժ նեղանում էին։ Ըստ պատմութեան Ռաւստոս Բիւզանդացւոյ՝ Հայերն չէին սիրում անել մի պատերազմ՝ որ իւրեանց կարևոր չէր, միշտ ցանկանում էին յետ դառնալ իւրեանց հայրենիքն և լինել իւրեանց ծնողաց և բարեկամաց մէջ։

Յամի տեառն 370։ Հայաստանի բնակիչներն դժգոհ նոյն երկար և ազնուական պատերազմներից՝ որ անում էր իւրեանց Երշակ Թագաւորն Գ., ուզարկեցին բազում պատգամաւորներ բազկացեալ նախարարներից, և նահանգի կուսակալներից, ընտանեաց հայրերից, և գիւղացւոց կողմից փոխանորդներից, Հայաստանեայց Հայրապետ Ս։ Ներսէսի մօտ, տխրելու համար նորան յորդորել զԹագաւորն՝ որ խաղաղութիւն անի Պարսից հետ և մնանէ իւր երկրին։ Այս ուզարկեալներն մի և նոյն ժամանակ իմացրին Պատրիարքին՝ որ եթէ կամեցէր իրաւունս առնել իւրեանց նկատողութեանց, այլ չէին կամենալու կռուել կամ հնազանդել իւրեանց Թագաւորին*)։

Գ.— Այս երկրի պատմութեան մէջ առանձնապէս հետք վիճականք՝ որք միշտ յարգել են փոքր ժողովուրդների և գրացիների իրաւունքն, առանց երբէք փափագ ունելու խառնել նոցա կալուածներն իւրեանց յատուկ տէրութեան հետ։ Եթէ երբեմն պատերազմում են նոցա հետ, այդ միայնակ նորա համար է՝ որ ապստամբութեան միտքն նուաճեն կամ թէ չարամիտներին պատժէին։ Եթէ սիրատոմ են նոցա երկրին, կամ թէ աւերում են իւրեանց թշնամիներին, թողնում են միշտ դրացի ժողովուրդներին ինքնուրոյնապէս իշխել, կամ թէ հաստատում են մի ազգային գլխաւոր իւրեանց ընտրողութեամբ։ Սիչ Թագաւորներ են գտանվում որ կամեցած լինէին օգուտ քաղել յաջող պարագաներից, շըփոթութիւններից, կամ թէ իւրեանց դրացիների տկարութիւնից յաղթութիւն անելու։ Պատմութիւնն միայն երկու հարբուհարութեան օրինակ է ընծայում Հայերի Թագաւորների մօտ։ Դոքա եղեն Երուաշէս Ա. և իւր որդի Տիգրան Բ. որ յաղթութեան փառասիրութիւն են ունեցած, և չը պէտք է զարմանալ յոյժ՝ որ առաջինն սպանուեցաւ դաշտի մէջ իւր յատուկ զինուորներից, և երկրորդն ճնայց լքեալ երկրի նախարարներից, կամ հաւանարիչներից, և յետոյ յաղթուեցաւ Հռոմայեցիներից։

Հայաստանի նախարարներն պատրիկք էին, դաշնակից տէրեր վիհապետի հետ, մի

(*) Բաւստոս Բիւզ. գիր. Գ գլ. 51։

և նոյն ժամանակ պահպանող ժողովուրդի իրաւունքն։ Նոքա ունէին մի կարողութիւն՝ որ հակակշռում էր թագաւորից իշխանութիւնն. նոքա իրենց կոչում էին իշխան+ Ղազա-ոդո-նէան, և կրում էին ազգաշողորդ մականունը՝ ինչպէս ընտանեաց հայր, ժողովրդեան հայր կամ մի գաւառի հայր և իրենց միշտ համարում էին հանապատ ինչպէս թագաւորից անկախ տէրեր։ Նոցա իշխանութիւնը այնպէս էր՝ որ արքայական հիղինակութեան ոյժն կախուած էր միայն թագաւորի և նախարարների մէջ տիրող ներդաշնակութիւնից։ Այդ նոցա իշխանութիւնն հիմնուած էր էականապէս ժողովրդեան սիրոյ վրայ և այն միաբանութեան վերայ՝ որ պահում էին իրենց և ընտանեաց հայրերի մէջ՝ որոց իրաւանց բնաւ չէին ձեռնում և նոցա համարում էին որպէս ապաստան+, թէ և նոքա ունէնային ցած աստիճան։ Այսնախարարներն հասարակօրէն սերուած էին իրենց կառավարչական ձևով ապրուստ ապահովութեան և վաճառականութեան շնորհած պաշտպանողութեան՝ և իրենց ունեցած նահանգներն և գաւառներն զարդարելու հոգացողութեան համար, բազմացնելով հասարակաց շինութիւնները և գիւղերի թիւն։ Մեկ կերպիւ պարտաւորուած էին շնորհելու ներումն, տեսնելու ժողովրդեան շահերն և պահպանելու նորա իրաւունքներն, վերջապէս իրենց տալու աւելի պատիւ և աւելի իշխանութիւն։ Եթէ մի նախարար գործ դրում էր մի ինքնակամ իշխանութիւն կամ թէ հարստահարութեան գործեր որ և իցէ մի գաւառում, ժողովուրդն յոտի էր կանգնում նորա դէմ, կամ թէ խնդրում էր թագաւորից հանել զնա ի պաշտօնէ, և յանձնարարել նախարարական գործակալութիւնն մի այլ անձի մի և նոյն ընտանիքից, պատճառ որ՝ այդ իշխանութիւնն ժառանգական էր ամեն ընտանեաց մէջ՝ ինչպէս մենք արդէն ասել ենք։ Պատմութիւնն հաղիւ մեզ կարող է ընծայել սակաւ օրինակներ այն անիրաւութեանց և նեղութեանց համար՝ որ այդ կառավարչական գործում էին ընդդէմ ժողովրդեան։ Նոքա իրենց պարտաւորութիւն էին համարում պատուելու սովորութիւնքն՝ կարգերն և իրենց նախնիքների հայրենական մատակարարութեան ձևերն։ Թէ իրենց օգտի համար և կամ սովորութեամբ նոքա միշտ իրենց ցոյց էին տալիս նախնիքների քաղաքական անտեսականութեան և վարչութեան ճշգրիտ պահպանողներ։

ՃՕ. — Թագաւորի խորհրդարան բաղկացնողքն այս նախարարներն էին բոլոր կարևոր գործերում՝ որպէս մի թագաւորութեան կալուածի վաճառելն, մի նախարարի մահուան դատապարտելն, դահընկեցութիւնն, և իւր աջսորանքն, մի քաղաքի հրաժարուիլն իւր իրաւունքներից, պատերազմի յայտարարութիւնն, կամ թէ մի խաղաղութեան դաշն, թագաւորի վճռիւն պիտի հաստատուէր նախարարներից, եթէ ոչ սոքա իրաւունք ունէին մերժելու իրենց հարկն և իրենց զօրագունդն։ Թագրատունեանց ընտանեաց վերջին թագաւորն Գագիկ Բ., մի տեսակցութեան մէջ՝ որ ունեցաւ Մոնոմախ կայսեր հետ 1046 ամի, ասում էր այս իշխանին՝ որ «Այոց թագաւորներն չէին կարող վճռա-

նիլ մի օտար իշխանութեան, իւրեանց իրաւունքն որ և իցէ մի քաղաքի վերա առանց երկրի նախարարների յօժարութեան, որ սոքա նմանապէս չէին կարող այդպիսի մի սեակ հրաժարուիմն անել, առանց յայտնի հաւանութեան պետութեան առաջին պէսարի, որ թագն և ամբողջ թագաւորութիւնն վերաբերում էին ալդին՝ որոյ նախարարներն ներկայացուցիչք էին և թագաւորն չէր ոչ այլ ինչ՝ եթէ ոչ նոցա ատենապետն*)։ Այդ երկրի պատմութիւնն ցուցանում է, այլ և նախարարների մի անչափաւորեալ կարողութեան օրինակներ. նոքա թոյլատրում էին իւրեանց երբեմն գահընկէց առնել զթագաւորն ըստ իւրեանց կամաց։ Այլ պատմագիր մի թագաւորներն երեւում են չունենալ կարողութիւն հրաժարել թագից և տալ զոյն այլում ընտրեալ իրենցից, և ոչ էլ հաստատել մի ամենանական խնամութիւն մի օտարական անձի հետ առանց նախարարների յօժարութեան։

(Շարունակելի)։

Թ. ՍՕՖԻՍ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԱՒՈՂՋՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱՀԱՐԱՑ։

Նեքտարիոս։ Կանոնք առողջութեան ուսուցանեն պահել զառողջութիւնն, ճանաչել տկարութեան պատճառս, և հնարս, որով քաջահմուտքն կարեն կանխել և խափանել այնոցիկ պատճառաց ազդեցութիւնս։

Երբ այսոքիկ հնարք իւրեանց բնութեամբն մնանեն բժշկութեան և վերաբուժութեան սէրութեան տակ՝ յայնժամ բժշկականութեան ուսումն՝ նախապահպանողական բժշկութեան անուն առնու։

Բժշկականութեան ուսումն մեծ իմն օգտաւէտութիւն է բժշկութեան՝ հիւանդացած մարմինն վերստին առողջացուցանելովն, և առողջապահական դարմանս սահմանափակելովն։

Նախնեաց մէջ գրեթէ բոլոր բժշկութիւն էր ուսումն առողջութեան. հնոյ ժողովրդոցն կանամարկոզ օրինաց մեծ մասն՝ մանաւանդ Մովսիսական օրինաց՝ զոր Մահմէտ վերստին առաջ եբեր, ամենաիրաւ ացի առողջապահութեան օրինաց հիմունքն են։

Այս նոր օրէնքն աքանչելի լինէր արդեօք հետամուտ անձին, որ նախնեաց հետ այնչափ արդասիս. մարմնամարզութիւնն, և բազանիք ընդհանրական էր նոցա, և գրեթէ ամենօրեայ. նոքա կրէին լայն և վայլուն զգեստս, քաջ գիտելով թէ այնպիսի հանդերձք չերմացուցիչ են ի ձմեռան և զովարար յամրան։

Այլ աւաղ՝ զի բազում վրիպմունք ըստ ըրդեցան այն գերազանց ուսմանց մէջ, բժշկականին մէջ քանի ինչ յիմարութեան և անապաշտութեան արդիւնք. այլք թուեցան արտաստուերի գիտութեան հետ։ Որպէս Ալիդուրիոս*) ի մահ դա-

(*) Մատ. Եգէս. ձեռագիր օրին. Թագաւոր. զբրատան մէջ։

(*) Էր մեծահամբաւ օրէնդիր Սպարտիացւոց, որ կրթութեան ամենագեղեցիկ օրինաց հակառակ

տապարտէր ըստ արտաքին երևութին տկար ծնեալ մանկունն, որք կարէին լինել հզօր զինուորք ի ժամանակին, և զառողջս կարծելով առաւել ևս հաստատուն գործել, յուրտ ջրոյ մէջ ընկղմէին իւրեանց մօր գրկէն անմիջապէս որոշելէն զկնի: Ընդհատել փորձ, որ ի մեր ժամանակս անգամ ունի իւր կոր կռնահիլցս:

Այլ ո՞, որ անձն բարեզգած չ'պիտի քրտամբք թաթաւի այդ ուռկանի մէջ: Ղիզուրկոս և մեծ մասն մեծամեծաց հրնոց առաւել ցանկային ունել բազմաթիւ զօրականս՝ քան թէ մտախոհս. այսպէս ևս խնդրէին արդեօք զարգացուցանել ըզմարմին. նոքա մարզէին չեզս առաւել քան ուղղոս. նոցա ուսմանց մէջ մարմնամարզութիւնն ունէր առաջին տեղին. Սպարտիա և Թէբայիդ ըմբշաց ճոխանայէին, բայց հետեւելով փորձոյ Պարանիսի՝ ըմբիշք նախնեաց ժամանակին անհոգ մարդկան կարգին վերաբերէին:

Նրեք տեսակ ազգու ներգործութիւնք են առողջութեանց: Սիջնէ՝ որով ապրիմք; Ընթաւսաց մարմնոյ գործարքեալք, և յառնեալ գոյութիւն:

(Շարունակելի).

Թ. ՕՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՇՄԵԱՆ.

տայր սպանանել ըստ երևութին տկար ծնեալ մանկունն, որք գուցէ կարէին հզօր զինուորք հանդիսանալ. որոց ճիշտ նմանութիւն է խառնել մեղը լեղուոյ հետ, որպէս Մ. Տ. օրինաց հետ և անապաշտութիւնն:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱԶԳԱՑԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ.

Ո՛ր եւ իցէ աշխարհի՝ Ազգի եւ ընկերութեան յառաջադիմութեան եւ պայծառ յարատեւութեան համար պէտք եւ միջոցներէն է Ողջամիտ կարծեաց ազատութիւնն:

Ուր կպակասի այս զօրութիւն՝ անդ չ'կրնայ յարատեւ յառաջադիմութիւն եւ կենդանութիւն:

Սակայն կարծեաց ազատութիւնն կպահանջէ անշուշտ եւ առաւել արդիւնաւոր կդործէ երբ զուզընթաց աջակից ունի զՄտաւոյց ազատութիւն, որով ողջամիտ կարծիք եւ խորհուրդներ առանց անծուկ սահմանի մէջ կանուանելոյ եւ խեղդուելոյ՝ հրապարակական ատեաններ այս ինքն բանիմաց ժողովրդեան դատաստանին կներկայանան հրատարակութեամբք, եւ արժանի ներդործութիւնը եւ արդիւնքը եւ կամ բացասութիւնը կստանան: Որովհետեւ մինչ բանասէր մի անձն մի խնդիր կյուղէ, այդ խնդիր ենթարկուելով բազաց ազատ եւ ողջամիտ կարծեաց եւ դատողութեանց՝ այնպէս կվշակուի՝ զի առաւել օգտաւէտ կերպարանք կզգենու եւ գործնական արդիւնք կարտադրէ հասարակաց զարգացման եւ բարօրութեան համար:

Իսկ Մտաւոյց ազատութիւնը պէտք չէ եղրակացնել շոկ հին եւ նոր մտաճնագրութեանց հրատարակութեանց մէջ,—որոց արդիւնք՝ ըստ տեղւոյն եւ պարագայիցն՝ ոչ այնքան նշանաւոր կարող են լինել.—այլ յատկապէս հրապարակական պարբերութեանց, այս ինքն օրական, շաբաթական եւլն. լրագրաց եւ ամսաթերթից մէջ կրպահանջուի այս, որոց օրական եւ ամսական դիրքեր շատ յարմարութիւններ ունին եւ բազմարդիւն հանդիսանալ կարող են:

Ըստ այսմ արդարեւ հրապարակական պարբերութիւնք՝ երբ հմուտ, ողջամիտ եւ անկեղծ խմբագրութեանց եւ տնօրինութեանց տրամադրութեանց ստորադրեալ կհրատարակուին, եւ զրական աստղարիզին մէջ ճոխ եւ բարի նպատակներ մշերած եւ բեռնաւորած կդործեն, հանապազօրեայ լուրերով ժողովրդեան հետաքրքիր ուշադրութիւնը հրապուրելով ոչ թէ միայն ընթերցասիրութիւն կուսուցանեն եւ կտարա-

ծեն, ոչ թէ միայն հեռաւոր աշխարհներ եւ այլ եւ այլ ժողովուրդը եւ ազգերը միմեանց հետ կծանօթացնեն, եւ տպագրական մամլոյ յարաբերութեամբ կը միացնեն, իւրաքանչիւրոց կենցաղավարութենէն, առտընին եւ հասարակական ընթացք եւ գործքերէն ամեն տեսակ տեղեկութիւններ քաղելով կհաղորդեն, նոցա ընտանեկան եւ ընդհանրական վարմանց, շարժմանց, սովորութեանց, յարաբերութեանց, գործունէութեանց, արդեանց եւ այլոց վերայ զգաստիար եւ օրինակ կտան, զանազան վատ հանգամանաց եւ գործոց նկատմամբ եւս ի դգուշութիւն հրատիրելով, նորահրնար մերենագործութեանց, դիւտից, արհեստից առ եւ արոց, վաճառականութեանց եւ այլոց վերայ տեղեկութիւնները կընդունին եւ կհրապարակեն, կարծիքներ, դիտողութիւններ եւ խորհրդածութիւնները կյաւելուն, եւ միմեանց նախանձը գրգռելով, վերջապէս ոչ թէ միայն տեղական այլ եւ այլ պակասութիւնքը ի վեր կհանեն եւ ուրիշ տեղեկութիւններ հաղորդելով այլոց հետաքննական ուշադրութիւնքը կհրաւիրեն, այլ մանաւանդ, որ առաւել մեծն է, խմբագրութիւնք հմուտ, ողջամիտ եւ անկեղծ լինելով եւ համայն աշխարհի հետ ըստ մտաւորականին եւ մամլով յարաբերութիւն ունենալով, կմոռանեն ժողովրդեան մէջ, կթափանցեն նոցա կարօտութեանց եւ զգալիարաց մէջ, կշօշափեն թերութիւնքը, կկշռեն բարոյական եւ մտաւորական պակասութիւնքը, արհեստագիտական յառկութիւնքը, եւ կարողութիւնքը, երկրագործական գործողութիւնքը, միանգամայն դիտելով եւ ժողովրդական այլ բազմատեսակ վնասներ հանգամանքները՝ կարծնցնեն եւ կոգեւորեն ջժողովուրդ, կարելի միջոցներ՝ դարմանները եւ ապահովութիւնքը կառաջարկեն, կուսուցանեն եւ կտարածեն, կքննադատեն ու կքաղդատեն դիմին ընդ նորոյն, կփաստաբանեն օգտաւէտութեան կամ ներհակին վերայ, կառավարութեանց կաջակցին եւ վնասատիներքը կհալածեն, մինչեւ անդամ շատ պատահմունքներէն օգուտ կքաղեն, գործադրութիւնքը կպահանջեն կամ կխնդրեն, այնպէս որ՝ նոցա անկեղծ եւ սրտայաւ գործք եւ ազդեցութիւնք մեծ բարութիւններ կարտադրեն եւ կբեղմնաւորեն:

Թէ եւ ամեն պարբերական թերթք մի եւ նոյն ուղղութիւն չկարեն կրել, որք զանազան ճիւղերու բաժանուելով՝ այլ եւ այլ նպատակներ ունին, բայց եւ այնպէս՝ բարեպատակ ըղձից մէջ տարբերութիւն չկայ, եւ միշտ ժողովրդեան համար է եւ մեծ օգուտ կարող են տալ այս կամ այն ուղղութեան մէջ, որք միանգամայն բոլորն եւս ի բարօրութիւն նոցա (ժողովրդեան) կվերաբերին:

Ա.րդ Հայոց մէջ եւս կան ազգ. պարբերական թերթեր, որոց շատք շաբաթական, ոմանք օրական, սակաւքն ամսական, սոքա եւս իբրեւ Օրագիր կամ Լրագիր՝ Հայոց համար պիտի ունենան մի եւ նոյն ուղղութիւն եւ նպատակ՝ ինչ որ վերադոյն ասացաւ, եւ որքան պարագաներն կներեն, եւ որքան տեղական ինչ ինչ հանգամանքներն կթելադրեն՝ պիտի ջանան ազգային նախադաս պահանջներն եւ օգուտներն դիտել, կշռել, քարոզել, նուիրագործել, եւ խրախոյս տալ:

Ա.ռանց խստապահանջ հանդիսանալոյ, եւ առանց մոռանալոյ նիւթական, բարոյական եւ տեղական միջոցները, այժմ Թող հետաքօտուի՝ Թէ ի ներկայս մեր ազգ. պարբերական Թերթերն որքան հաւատարիմ եւ նախանձախնդիր են իւրեանց պաշտօնից եւ պարտաւորութեանց մէջ:

Սակաւ բացատրութիւնը յիշելով, մնացեալքն կրաժանուին ըստ հետեւելոցս պիսաւորապէս:

Նախ ազգ. պարբերական Թերթից մեծագոյն մասի խմբագրութիւնք չունենալով նիւթական կարողութիւն եւ ապահովութիւն, եւ ապաւինելով ձեռնտուութեանց եւ նպաստից՝ եԹէ ոչ բոլորն՝ գէԹ բազումք սակաւաժամանակեայ շարունակութեան մէջ կվիատին, եւ պարտուց ենԹարկուած եւ ճնշուած կդատապարտուին ասպարէզէն հեռանալոյ եւ իւրեանց ձեռնարկութիւնքը կխափանեն:

Երկրորդ՝ բազումք Թէ եւ որոշ մի ուղղութիւն եւ դրօշակ պարզած կծեւանան եւ ի հանդէս կյառնախեն, սակայն փորձառական եւ գործնական հմտութիւններէն զուրկ դանուելով հանդերձ, օրինաւոր եւ գործօն աջակիցներ կպակասին նոցա, եւ մտաւորական մերանոցի անկարող եւ աղքատ մատակարարութիւնն եւս սպառելով՝ կվիճակուի ալեաց մատնուած ծովակուր անծի դրութեան:

Երրորդ՝ սակաւք ոմանք Թէպէտ ունին նիւթական միջոցներ եւ ապահովութիւն, սակայն զուրկ են հմուտ եւ փորձառու տնօրէնութենէն, եւ վերջացական հիմնարկութիւններ երեւակայելով՝ կամ յառախակի փո-

փոխութեանց ենթարկուած՝ երերուն եւ անդոյն վիճակի գլորուած են: Եւ կամ վատձեալ լինելով՝ կիեսեւին օձար գաղափարաց եւ պահանջմանց, եւ ըստ այնմ կբոլորեն իւրեանց պարտաւորութիւնքը:

Չորրորդ՝ սակաւք ոմանք մի տարօրինակ նպատակ յղանալով եւ զայն յառաջ մղելոյ համար այլոց վերայ բռնանալ երազելով, երբ դժուարութեանց առջեւ կընկճուին, նախանձոտ ոգեւորութեամբ մղեալ եւ կուրացեալ կթաւալուին հակազդային դրից մէջ եւ այնպէս կսեթեւեթեն եւ կիսայտառակուին:

Ա.այսքէն այսպիսի վիճակի մէջ եղած ազգ. պարբերական Թերթերէն ինչ եւ որքան օգուտ կարելի է նպաստել, երբ վերոյիշեալ պատճառներէ բռնազբօսեալ՝ ոմանք այլ եւ այլ սկզբանց եւ ուղղութեանց մէջ կկապան, առ ի չգոյէ հիւթոյ՝ կոյրզկուրայն ընթացից մէջ կգահավիժուին, կամ կսոխպուին այս եւ այն կուսակցութեանց կոյր զործիք լինել, իբրեւ մեքենայ խօսել եւ գործել յայլոց բռնադատեալ, կամ անձնական դուշնաքեայ՝ չնչին օգտից համար անգամ՝ յանիրաւի զայս ջատագովել եւ զայն պարսաւել, զրպարտել, եւ հալածել, առանց ակնառոտս լինելոյ կամ առանց երաշխաւորեալ հաւաստեօք վերահասու լինելոյ՝ ի չլսոյ հաւատացած եւ յափշտակուած զոմն յերկինս կբարձրացնեն, եւ զայլ ոմն յանդունդս թաւալել կերեւակայեն, կդատեն՝ զոր ոչ կարող են իմանալ եւ ոչ խելքներն կթափանցէ կշռել. ոմանք նոյն իսկ իւրեանց անձերը կառավարելոյ անկարող լինելով՝ հեռաւոր անձերը եւ գործերը կդատեն, պատգամներ կտրոտան. ոմանք յօդուածոյ եւ լրոյ սովու մէջ տաղնապելով՝ ինչ որ այլք գրեն՝ ինչ որ լսեն՝ ինչ որ սուտ եւ սխալ կքաղեն՝ առանց ստուգելոյ կամ ստուգել հետեւելոյ՝ անմիջապէս կհրատարակեն՝ որպէս զի իւրեանց թերթերը չցնտած լինին: Ոմանք այնպիսի խընդիրներ կյուզեն՝ որք ոչ թէ միայն ներկայիս մէջ օգուտ չունին կամ կարելի չեն, այլ մանաւանդ առաւել օտար շահուց կծառայեն, եւ փոխանակ յօնքը յարդարելոյ՝ զաչսն կփորեն: Սակաւ ոմանք վարձեալ զործիք լինելով՝ ոչ թէ միայն սեւին սպիտակ՝ եւ սպիտակին՝ սեւ ասելոյ պարտաւորեալ. եւ մղեալ կընդնեն, այլ նա եւ Եկեղեցւոյ եւ Եկեղեցականաց վերայ յաւէտ անտեղի զրպարտութիւններ կտեղան, եւ կտրնին յաչս ժողովրդեան առելի եւ զղուելի ներկայացնել, արարողութիւնքը ծաղրել, կիրակիին կիրակուն անուն կնքել եւ վատաբանել, այս եւ այն լրագիրը զրպարտել, վարկը զեռնահարել առելի իմն նախանձոտութեամբ, եւլն եւլն: Վերջապէս կան ոմանք եւս, որ Յօնանու Թեման նման՝ կարճատեւ շարունակութեան մէջ անգամ, կխարխափեն եւ նոցա ինչ դոյն ունենալներն իմանալ դժուարին կլինի:

Սորա պատճառ չեն՝ որ շատ տեղ շատ պարբերականք կանարդուին, մինչեւ անգամ փոխանակ ժողովրդական ընթերցասիրութիւնը հրապուրել զրդռելոյ եւ բազմապատկելոյ հակայարձակ յառաջադիմութեամբ, բազմաց զզուանք կպատճառեն եւ յամր ընթացքով կը տարածուին, քանզ որ ի տեղիս տեղիս իբրեւ անբարոյականութեան աղբիւրներ կինկատուին, կամ ժողովրդական հրապարակական ցոյցերով ի հուր կմատնուին Թերթերն:

Ա.յս եւ այսպէս են ուրեմն ազգ. հրապարակական պարբերութեանց պաշտօնք եւ պարտաւորութիւնք, որով աղգային կենսական խնդիրներ բարձի Թողի մնալով, դատարկաբան յօդուածներ կհրատարակուին, ոմն տարաժամ կամ անժամանակ եւ կամ անյարմար եւ բազմակնճիռ մի բան կպահանջէ, այլ ոմն Յանմանադրութեան հարուած տալ կխիղախէ եւ կերեւակայէ, ոմն Մասիսի գագաթան պատգամներ կուղղէ, այլ ոմն Ա.խուրեան գետոյ եւ Եփրատայ անդունդները (՞) կչափէ, որ մէկն ասեմ:

Արդարեւ այս շատ ցաւալի դրութիւն է:

—Ո՛հ, ա՛յսպէս կնախատուին եւ կպղծուին կարծեաց եւ Մաղխոյ ազատութիւնք, եւ ի փոխարէն՝ կոյր կրից եւ ատելութեանց սին դրօշներ կծածանին, եւ այն ի վնաս եւ ի կորուստ Ա.զգի եւ Եկեղեցւոյ մերոյ:

Ի վերայ այսր ամենայնի՝ սորօք պէտք չէ Ա.զգ. պարբերական Թերթից ցարդ արդիւնաւորած բարութիւնքը իսպառ ուրանալ կամ վարագուրել, որ անկարելի է. վասն զի կանխատ այլ լրագիրք՝ ինչպէս եւ ի ներկայս սակաւք ոմանք բաւական ազգօգուտ ծառայութիւնք մատուցին եւ կմատուցանեն: Մեր նպատակ ներկայիս մէջ Ա.զգ. պարբեր. Թերթից վիճակը հետազօտել եւ նոցա վերայ մասնաւոր դաղափար տալ լինելով, միանգամայն կըղծամք՝ զի որոց անկ է՝ այս համառօտ դիտողութիւնքը ուշադրութեան առնելով՝ զգան իւրեանց պատկառութիւնքը, զգան Ա.զգիս եւ Եկեղեցւոյ պահանջները եւ օգուտները, հեռանան

անմնական կիրք եւ ատելութիւններէ, ղդուշանան տարաժամ կամ աղգավնաս խնդիրներ յարուցանելէ, ընտրութիւն գործեն իւրեանց հրատարակութեանց մէջ եւ անհիմն եւ ստապատիր լրութեանց տեղի չտան, աշխատին ժողովրդեան մէջ ընթերցասիրութիւնը տարածել, նոցա կարողութեանց յարմար եւ հետաքրքրական տեղեկութիւնք հրատարակելով՝ նոցա մտքերը մշակել, դաստիարակութեան խնդիրը աղդօգուտ լմն խորհրդածութեամբ՝ շրջանկատ հետաւտեսութեամբք զարթուցանելոյ եւ արդիւնաւորելոյ, առանց վատաբանիչ եւ կռուայոյզ բանադատութեանց՝ եւ առանց խստապահանջ յարծակմանց՝ դպրոցները բարեկարգելոյ համար օգտակար տեսութիւններ մատակարարել եւ իրաքանչիւր կարդալ, միանգամայն՝ բծախնդրութենէ ըստ կարելւոյն խոյս տալով՝ Ա.զգ. եւ Եկեղ. հաստատութեանց ապահովութեանց եւ արդիւնաւորութեանց հոգ տանել խնդրեն:

Ա.զգային հրապարակական պարբերութիւնք՝ ինչպէս այս ամենը, նոյնպէս ողջամիտ կարծեաց եւ մանոյ ազատութիւնը քաջ իմանալով՝ պէտք է որ իւրեանց պարտաւորութիւնքը նուիրական ճանաչեն, պաշտեն եւ յարդեն, միանգամայն բարոյական գեղեցիկ օրինակներ տան: Ա.ւա՛ծ է ոչ՝ մանաւանդ երբ զուրկ են կարևւոր միջոցներէ՝ լաւ է որ խոյս տան ասպարէզէն եւ վէրքի վերայ վէրք չբանալուն:

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՆՈՐ ՏԱՐԻ

Ցոլով ամայ հին ականաց շրջանակ
Վաղնջական աղգամեծար մեզ Ա.անդ
Իղձ ի սրտէ յարև հանեալ զՀայն՝ նղբօր
Զօր բարեբաստ մաղթել յերկնից ձգտեցան.
Ցոլուս 'պա Հայն ըղձաց մաղթեաց ընկերին
Բարեաւ կաղանդ և շնորհաւոր զնոր Տարին.—
Սակայն ու՝ այսուիկ բիւր չարաբեր մատեան ամք
Եւ զարհաւիրս զսով և լլկանն ի մեզ ածին.
Ընդէ՞ր — ո՛ Հայ — զի՞ յաղերս ոխ անանսաց
Կացին Երկինք.— է՞ քանղի սիրտդ ոխըզգած
Խնդրէ զոր ինչ չկամի նղբօրն բարգաւաճ
Եւ կնգծ լեզուաւ սուտ Հայցս յղէ առ Աստուած.
Բա՛հ—ի՞նր կարես զոս ժառանգել զայս արատ,
Արատ՝ որում խիղճ կայ ի կապ և հաւատ,
Արգելք դընէ.—Գժտի՜ն Օրէնք բնական—
Չի պաւպրե՛ժ է սա Հայոյն ու նշաւակ. . . .:
Բայց մինչ երկին և երկիր պերճ հրճուանօք
Զարթեալ ի քնոյ գարնան ի վայր շաղին յօղք
Եւ արտուտիկ ներ Ոքղեաց դալկլկիկ
Ցերկինս ի վեր զերգս ընծայէ և ւոզոմք.
Ցառնեն Համայն շունչ և գալարք ի նոր տի.
Գան բարևել զպերճ եղանակն յիւր մոմ.—
—Իսկ դու մինչ սառն բուք և հիւսկէն մըրկաց
Անշուք առնեն զգեստաւորութիւն քո յարկի.

Եւ ամպամած այն ինչ երկնից խորանյարկ
Գժդմնագոյն յաչաց ծածկէ զարեգակ,
Զարտուկետրոն ներմուծանես դ.քո կաղանդ
Ի անբերկրաբերն սառնագողգող Նաւասարդ։
Բա.—քանզի քո սիրտ ձնշեալ քան զեղանակ
Ու՛ աշխոյժ արիւնդ բարեռանդաց բարի կամք,
Հակիրճս ածեն զյորդ սէր եղբօրդ ու հայրենեաց —
— Է զի ի մեր գլուխ՝ անցին այսչափ հիշատակ ամք։
Մի՛ մի — Հայիկ սուրբ արա սիրտդ և բնդան,
Թո՛ղ գաղափար չ'իսախտի ճետին Արամեան,
Ա յլ՝ ժամանակն փոխաբերցէ յօրինակ—
— Զիւր սառնութիւնն—բարեխառնին քո բնութիւն։
Այդ իսկ է ժամ խոհականին կալ զընդին
Մինչ առ դուրս են այս՝ փոթորիկ՝ ձմեռնային,
Թէ աշխարհիս տակաւ չև է կատարած՝
Բայց մերձ ի յանդ են եղանակք անց ամին։
Թէ ոխ մառան հայթայթանաց եղ ի գլուխ,
Հատան համբարք կամ՝ վառելիք փայտ, ածուխ,
Սով ի ներքուստ ս՝ արտաքուստ օդն բևեռեան
Փեղ և քոյոգդ նքտանք ածցեն ցըրտաբուղխ։
Թէ չէ դիզեալ քո ճոխ պարէն հոգէկան
Վեր ի յերկինս՝ օժիտ առից բարուեթեան,
Անդէն առա ջերմեռանիք Հակարջեան
Տապ և տոչոր ածցեն հոգւոյդ յաբիտեան։
Սիրեա զեղբայրդ ոչ Հայ, զիղբայրդ ու Հայրենիք,
Թող զօրինակդ յանձին ածցեն Հայ մանկտիք.
Ցայգ զոր մեծն Հայկ—և յայս կոյս Հայ.ք՝ գործս արդար
Ցուցին ազանց Հայոց բնութեան արգասիք։
Թէ շատ մէ բնաւ տեսանիցես զայլ Տարիս՝
Մի՛ Հայրենեաց ցանկէ կարդէ խտրիցիս,
Տես զի՞նչ խնդրէ Մասեաց մեծ Մայրն արժանյարդ
Զինչ զարկ ազգիդ, զինչ Հարկ թագին՝ ում՝ ենթիս։
Եթէ ուսար դու բնաւ զօրէնս՝ զբարս ազանց,
Ցուշ առ ըստոյդ և ըզպարտեաց Հարց ու մարց,
Թո՛ղ մի՛ մեռցէ Հայծիւնն անուս և անդէտ,
Զի այս են Օրէնք — Գէթ անլըռում — Հայկազեանց։
Ո՛հ, մէ այլ ամբ տեսցեն զերեանս՝ յատագայս
Շուրջ պերճ ուստերք և պերճ դստերք շնորհաս *)
Իմաստութեամբ պայծառ քան զՀար և զոսկի
Գերդաստանաց նոր — ամա — տօն Արմենեաց։

(*) Շնորհաս — շնորհօք զարգացեալ — հանեալ շնորհօք ի չափ հասակի։

Անդ գայ ի լիր ինձ Հայազգւոյն աննահանջ,
Անդ Հայաստան այլ մի՛ եսցէ խղճատանջ,
Եւ Հայուհիք, մայք վիհ որդւոց և Թոռանց
Փառս յղեսցեն նոր Կաղանդին և յԱստուած։
Ուրեմն ի յայս տօն ամանոր, եկ մաղթեմք
Հայոյն ուսումն, Հայոյն սէր և լարի դէպք —
Ուսումն միայն առնէ ըղՀայն մեծարու,
Թող 'պա ուսմամբ զպարտիս Հայոյն ճանաչիմք։
Մի մանկաւոյն ձօնեցես զարծաթ կամ՝ զոսկի
Քան վաղապնդի սովորութեան Հայ ազգի —
Տուր նոցա սիրտ, նախանձ լարի, սէր Մասեաց
Ցորս ոսկեհուռս արձանասցի քո Տարի։
Անուս մանկտին պարզիկ քան զգառն և տիմար,
Բայց ո՞ւր զմայլի բուծն ի յէակս հրաշափառ —
—Թող գիտասցէ նա ճառ կարդալ ի քո դամբան
Առաւել քան զմայիլ, վայել, լալ գոռալ։

Ա. Ղ. ԴԱՒԻԹԵԱՆ։

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՂԱՐ.

Յակոբ Վրահանայն Տէր — Ալեքսանդեանց՝ որ յամին 1871 զրկեցաւ ի Վ՚Ալզարակրութենէ, ըստ թախանձագրին և վերջապայական խնդրանացն՝ կրկին արժանացաւ ընդունել զՎեղար և առաքեցաւ ի Մ՚Իաբանակցութիւն ի Ս. Կարապետի Վ՚անսըն Ներկայս։

ՀԱՑՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

ԵՒ ՀԱՆԴԷՍԻ.

Պաշտօնական գործով ի Ստաթէի վանուց գալով սուրբ Էջմիածին, և մինչ ցաւարտիլ գործոյն՝ շնորհ ունեցայ մի ամսաչափ մնալ Մայր Աթոռոյս մէջ, բայց և այնպէս չեմ կարող անտարբեր և անուշադիր անցնել առանց գրաւոր արտայայտութեան մի քանի անկողմնասէր նկատողութիւններ ի դիտութիւն սիրելի Ազգայնոց, որոց մասին խոնարհաբար կհնդրեմ ազգասէր Ամենագրոյդ էջերուն մէջ հիւրընկալութիւն։

Ճշմարտութիւնը թէ ի գրունս Թագաւորաց և թէ ի խրճիթս աղքատաց ամենայն ժամանակ հզօր և յաղթական խոստովանած է, զոր ուրեմն ամենայն զգայուն և բանական մարդոյ վերայ անհրաժեշտ հարկ կայ խօսել զայն ազատ վստահութեամբ ամենայն տեղ առանց ակնածութեան. վասն զի եթէ ոմանք զրպարտ ամբաստանութիւններով և անհեթեթ խօսքերով յարձակուիլով կաշխատին դիմակել Նորա Համատարած լուսոյ ճառագայթները, այնպիսի անձինք իւրեանց հոգևոր և մտաւոր զգայարանքներն նախանձու և աստուածութեամբ թմրեցնելով անզգայացած են, և ոչ երբէք կարող են նորա ունենալ արգար և ուղիղ հայեցողութիւն որևիցէ ճշմարիտ առարկայի վերայ։

Շարունակենք խօսքերս։

Հայաստանեայց սուրբ և ուղղափառ Եկեղեցին իւր գոյութեան և դրութեան մէջ ի սկզբանէ ցայսօր ժամանակի անդադրելի պահպանուել է ղխաւորապէս վանականաց դրութեամբ և վանա-

կան պաշտպանողութեամբք, և ի ներկայս իբրև հաւատարիմ աւանդապահ կվայելենք մեր նախնի սրբազան հարց հոգևոր երկանց և ճրագանց կենսատիպ պտուղը, որոնք ի շինութիւն և ի պայծառութիւն Քրիստոնէական սուրբ կրօնի տքնեցան ճգնեցան բարեկարգել զեկեղեցի զանազան հոգևոր երգերով և փրկարար խորհրդաւոր ծէսերով, որպիսի սրբազան խմբին մէջ առաւել լավես շահատակող և նահատակող հանդիսացան բարեպարութեամբ և երախտաւորութեամբ մեծն Պարթև Իսահակ Հայրապետն և Թարգմանիչն Մեսրովբ, որք երկեցին եղանակաւոր զերդս շարականաց, որոնք իւրեանց երանելի ճակատներէն հոսեցին աղբիւրք քրտունքներ՝ որպէս զի անլեզու ազգերի լեզու պարգևեն, առաքելական ընթացքով ազգի և եկեղեցւոյ յառաջադիմութեան համար շրջեցան աշխարհս վերայ հարաշխարհեցաց՝ բոկոտն ելեն, բայց և այնպէս Մեծին Իսահակայ երախտիք փոխարինեցին, ձգել Աթոռն բանտերու մէջ տանջել, Շմուէլի Բրիշոյի և Սուրմանների ձեռք անցուցանել Աթոռն պարծանաց Հայկական ազգի՝ և իվերջ հալածանօք և ցաւօք իջուցանել զնա ի գերեզման։

Եթէ գարձեալ խորամուխ լինենք պատմական անցքերի՝ կգտնենք որ արդարև շատ անգամ ազգին Հայոց և եկեղեցին ենթարկուել են զանազան գառնաղէտ դիպուածոց կորնչնելով իսպառ ազգային բարեվայել չուքիւնք և երբեմն ընտանի թշնամեաց ձեռքով եկեղեցական բարեկարգութիւն, այնու ամենայնիւ վանականութիւնը արեամբ չարի դիմադրելով այն ամեն թշնամական յարձակմունքների ցայսօր պահել և պահպանել է անարատութեան մէջ իւր սուրբ Եկեղեցին, այժմ ևս և ամենայն ժամանակ առանց արտաքինների յորդորման կամ օգնութեան իւր նուիրական պարտականութիւնը քաջ ճանաչելով կկանայ և ջանալու է միշտ բառնալ իսպառ Եկեղեցւոյ մէջ թիւրութիւնք և թերութիւնք եթէ ընդհարին ներմուծած նորաձևութեամբ ընդ օտար ազդեցութեամբ։ Ի վաղուց գլխաւոր թերութիւն կնկատուի մեր եկեղեցական երգեցողութեան շարականաց մէջ, զոր առանց թափուցանելոյ խոստովանելու ենք ճշմարտութեամբ, որ այժմ ամենայն տեղ Հայոց Եկեղեցեաց մէջ միօրինակ ներդաշնակութեամբ չերգուիլ եկեղեցական երգեր և շարականներն իւրեանց բուն ձայներով, այլ այդ ամենը գրեթէ կախուած է երգիչների ձայնէն, կոկորդէ, հագաբէն. ուստի այսպիսիօք և այլատարագ եղանակներով իսկ բարեկական խառնակութիւն մի ձևացած է, որից և հետզհետէ իսպառ խանգարումն, մինչդեռ մեր սուրբ նախնեաց երգոց և շարականաց ձայներ յօրինելուն բուն նպատակներն էր՝ Քրիստոսի հաւատացեալ որդիքն ժողովելով Աստուծոյ փառաց տաճարին մէջ ընդ ձեռն հոգևոր երգոց և շարականաց պատշաճական եղանակաւոր ձայներով՝ նոցա հոգիք միտք և կամք հրաւիրել ի գործ՝ ի մեղաց, հրաւիրել ի ճշմարիտ և կատարեալ հաւատ Քրիստոնէութեան, հրաւիրել դէպ երկինք. ահա այս մտայն իսկ հաւատարիմ վկայութիւն ներսիսի Լամբրոնացւոյ մի քանի արտարացի խօսքերն թէ ,,չէք ինչ պիտիսի բան որ յեղաշրջիցէ զմիտս մեր յորախութիւն կամ՝ ի տրտմութիւն որպէս երգոցն ձայն եթէ ըստ պատշաճին լինիցի,, Իսկ այժմու ժամանակիս երբ շնորհիւ Բարձրելոյն գահակալէ զԱթոռ Հայրապետութեան ազգիս Հայոց Տ. Տ. Գէորգ Գ. վեհափառ Կաթուղիկոսն՝ որ և իբրև ճշմարիտ նախանձախնդիր Խնամակալ Կրօնի, եկեղեցական կարգաց և կանոնաց՝ տեսնելով երկարժամանակեայ խանգարումն եկեղեցական բարեղարգութեանց երգոց և շարականաց ասեմ վերաբերութեամբ, երբէք չվհատելով այն ամեն Հայրապետական ծանր զբաղմունքներէն՝ այլ ցաւ ի սիրտ միաբացաւ օր յառաջ ազատել Եկեղեցին այդ օրինակ խառնաշփոթ դրութենէն, հրաւիրել Կ. Պոլսէն ձայնագրապետութեան վարժապետ Պ. Նիկողայոսն Ս. Թաշճեան, ժողովել ամենայն վիճակներէ հատակաւոր եկեղեցական պաշտօնեաներ, որոնք Մայր Աթոռոյս մէջ ուսանելով կարճ միջոցաւ այնպիսի մեծ յառաջադիմութիւն ցոյց տուին, որ ամենեցուն զարմանալի էր. ի հարկէ այդ ամենը յատկապէս պարծանք են պարոն Թաշճեանի գեղեցիկ քանքարոյն և ազգասիրական եռանդոյն՝ որ անխոնջ ջանասիրութեամբ կցանկայ արդիւնաւոր երևալ իւր այդ նշանաւոր ասպարիզին մէջ։ — Արդարև շատ օրտաշարժ էր և

միանգամայն անմոռանալի սրբոյն Յակովբայ Մ՚ծ-րընայ Հայրապետի և սրբոյն Ստեփաննոսի նա-խավկայի տօնից օրերն, երբ մի կղերական բազ-մութիւն ձեռքերին բռնած Հայկական ձայնադ-րութեան թերթերն՝ գեղեցիկ եղանակը կերգէին միաձայն ներդաշնակութեամբ հոգևոր շարականներ ի մի բերան կիսաբողբոք կծնդնած Ս. Էջ-ման տեղոյ առաջը, և որը սուրբ Տաճարին մէջ ներկայ կգտնուէին՝ համարեա հոգևորապէս զմայ-լած վերացական գաղափարներ կզարթնցնէին իւ-րեանց մտաց մէջ, լիաշունչ գոհութիւներ ի սրտէ մատուցանելով բարեաց պատճառն՝ որ է մեծ բարերարն եկեղեցւոյ Վեհ. Հայրապետն մեր Տ. Տ. Գէորգ Դ. Ա յսպէս և շատ և շատ ուրա-խական էր պիշերային հանդէսն նոր տարւոյ առա-ջիւ Վեհարանին մէջ, ուր Մխիթարեանները հան-դիսակից էին իւրեանց բարեխնամ՝ Հայրապետի հետ. նախապէս պարոն Թաշճեանը ներկայացոյց Նորին Վեհափառութեան մի մեծ թերթի վերայ գծած Հայկական ձայնագրեր մի նոր երգի վերայ՝ որ երբև ՈՒԽՏ ի նոր տարի յանուն Վեհափառ Կաթուղիկոսի շարահիւսեալ էր, հետևաբար ձայ-նագրութիւն ուսանող խումբն գրաւորապէս եր-գեցին զայն երգը սրտաուչ եղանակը Եւրոպա-կան քառաձիւղ ներդաշնակութեամբ, ուր և հանդիսին պատշաճ ոտանաւոր և ճաւ կարդացին գովր Մակարն Գրիգորեան և Սարկաւագ Զօհ-րաբեան. ապա Վեհափառ Կաթուղիկոսն խօսեցաւ դէպի Միաբանութիւնը ազգով չորդորական և ի-մաստալից բանախօսութիւն ընտրան առնելով Յիսուսի կենսատու խօսքը թէ «Ես եկի զի ըղ-կեանս ունիցին, և առաւել ևս ունիցին,» համա-զական ապացոյցներով բացատրելով մարդկային ֆիզիքական և բարոյական կեանքերն՝ որ արդա-րև մեծ ազդեցութիւն և տպաւորութիւն ունեցաւ ամենեցուն վերայ. և ի վերջ ամենից Վեհ. Հայ-րապետն մեր մեծ գոհունակութիւն յայտնելով Պ. Թաշճեանին և ի նշան շնորհակալեաց վար-ձատրեց նորա արժանաւոր աշխատութիւնը որ-ժանաւոր ընծայիւ այն է մի պատուական ոսկեայ ժամացուցիւ։

Ա յժմ կմնայ մեզ ամենից երախտագիտական հոգւոյ զգացմամբ և համոզմամբ յայտնելով որ-դիական խորին շնորհակալեաց հաւատիքը առ երախտաշատ Հայրն մեր առ Մեծ Քահանայա-պետն Ազգիս՝ ասել ջերմեռանդ սրտիւ, Փա՜ռք մեծի և անզոյգ երախտեացդ, գոհութիւն հեռա-տես նախահոգացողութեանդն, և պարծանք յա-ւերժական անմահ յիշատակացն, քանի եկեղեցիք Հայաստանեայց կան ի շինութեան և ի պայծա-ռութեան՝ մեղ փառաւորի Վեհ անուն Նորա ի գոհութիւնս ընտրելոց և ի սիրտ ազգայնոց. յիշեսցի յաւերժապար պարծանաց գործ Պ. Թաշ-ճեանի. մեղ ՅԱշխիշատ ցնծան ոսկերք Մեծին Խաչակայ և ի կրկին խիղճ առցեն ոսկերք սրբոյն Մխիթարեան Օշական. – զի ահա գտաւ Ա յր մի ընտրեալ ի հազարաց լսատ սրտի և հոգւոյ նո-ցին զիտաց փառազարդել քիրտ և վաստակ նո-ցին հոգևոր, զիտոյ երախտագէտ հանդիսանալ Մեծին Մխիթարեան, նորոգ դամբարանին կառուց-մամբ. արդարև Ա յր մի ընտրեալ և Հայկեան պարծանաց արժանաւոր Գահոյն արժանաժա-ռանգ Գահակալ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԽԻԹԱՐԵԱՆ.

Ի ՅՈՎՀՈՒՆ 1874 ՄԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ.

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑ

(Շարունակութիւն)։

Ի ՎԻՃԱԿԻՆ Ա.ԱՒԱՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

	Ր.	Կ.
Խիչաղեցի Մինաս Աահակեան . .	1	
,, Մինաս քահանայ Յարութիւնեան		50
,, Մարտիրոս քհնյ Մանուէլեան .		50
,, Ազարիկ Հերապետեան . .		50
,, Գաբօ Կիրակոսեան . .		40
,, Յարութիւն Յովհաննիսեան .		20
,, Մանուկ Զաղեանց . .		30
,, Պետրոս մահտեսի Գասպարեան .		50
Հասարակութիւն Խաչաքիղհայ գեղջ	5	
Նոյն գիւղացի Յակովբ Պետրոսեան	1	
,, Թորոս Յարութեան . .		50

Խաչաքիլիսեցի Ստեփան Յովակեան	40
,, Ազար Պետրոսեան	15
Հասարակութիւն Եկեանլար գեղջ	10
Նոյն գիւղացի Սերովբէ Ամիքարեան	40
,, Գէորգ քահանայ Առաքելեան	40
,, Պետրոս քահանայ	20
,, Գօգօր Տօնոյեան	20
,, Յովհաննէս Դաւթեան	20
,, Խաչատուր Յովանիսեան	20
,, Յարութիւն Շէնոյեան	20
,, Սարգիս Չօնակապանեանց	20
,, Գէորգ Ամիրեան	20
,, Մնացական	20
,, Կարապետ Մինասեան	10
,, Վարդան Մարտիրոսեան	10
Հասարակութիւն Ղօղոթ գեղջ	8
Նոյն գիւղացի Բարիկ Ադամեան	20
,, Սարգիս քահանայ տէր Սիմէոնեան	1
,, Թովմաս Սիմոնեան	20
,, Բարսեղ Մուրատեան	20
,, Յարութիւն Ասլանեան	20
,, Բաղալ Գրիգորեան	20
,, Աստուր Պետրոսեան	20
,, Աստուր Գալոյեան	20
,, Օհան Սիմոնեան	20
,, Յովսէփ Մուրատեան	20
,, Դաւիթ Ղազարեան	20
,, Սարգիս Յակոյեան	20
Հասարակութիւն Ղուլիճան գեղջ	8
Նոյն գիւղացի Յարութիւն քահանայ Տէր Գէորգեանց	40
,, Յովհաննէս Մանուկեան	50
,, Գալուստ Բաղդասարեան	20
,, Գալուստ Սիմոնեան	40
,, Գրիգոր մահտեսի Սանոսեան	20
,, Սահակ Սարգսեան	20
Հասարակութիւն Ղասումալի գեղջ	4
Հասարակութիւն փոքր Պարնի գեղջ	10
Նոյն գիւղացի Ալէքսան Մկրտչեան	50
,, Ադամ տէր Առաքելեանց	50
,, Եղիկ Ղազարեան	50
,, Յակովբ մահտեսի Գրիգորեան	40
Փ. Պարնեցի Վարդան Ամիրեան	30
,, Թորոս Աւետեան	25
,, Ադրահամ Գրիգորեան	20
,, Յովհաննէս Յարութիւնեան	25
,, Մկրտիչ Մեհրեան	20
,, Ղազար մահտեսի Ասլանեան	20
,, Զաքար Կարապետեան	20
,, Խաչատուր Գէորգեան	20
,, Պապիկ Դաւթեան	20
,, Խաչատուր Մանուկեան	20
,, Մանուկ Խաչատուրեան	28
,, Թորոս Պօղոսեան	60
,, Մարտիրոս Մարգարեան	20
,, Հայրապետ Սարգսեան	20
,, Աւագ Սարգսեան	20
,, Նալչ Խաչատուրեան	20
,, Սարգիս Գալստեան	20
,, Կարապետ Խաչատուրեան	30
,, Ղազար Յարութիւնեան	1
,, Գրիգոր քահանայ Զանոյեան	40
,, Մնացական Մոլսեսեան	40
,, Մովսէս քահանայ Մնացականեան	40
Հասարակութիւն Ղազանչէ գեղջ	12
Նոյն գիւղացի Մկրտիչ քահանայ տէր Մկրտչեան	50
,, Խաչատուր քահանայ Մինասեան	50
,, Վարդան Բարսեղեան	50
,, Սարգիս Առաքելեան	20
,, Գարան Պապիկեան	20
,, Նուպար Մկրտչեան	20
,, Գուլոյ Ղազարեան	20
,, Համպար Տեփանեան	40
,, Գուլոյ Մկոյեան	20
,, Պապոյ Յարութիւնեան	10
,, Պապոյի Հարս	10
,, Սէրան Մարտիրոսեան	10
,, Մանուկ Պետրոսեան	2
,, Յովհաննէս Կուրղինեան	10
,, Եղիկ Խաչատրեան	20
,, Մկրտիչ Պետրոսեան	20
,, Կարապետ Մանուկեան	20
,, Ղազար Մինասեան	20
,, Մինաս Ամիրեան	10

,, Սլօյ Մարգարեան . . 10
,, Գրիգոր Վարդանեան . . 20
,, Եղան Մարկոսեան . . 20
,, Գուլի Ճարդենեան . . 10
,, Մաքոյ Պօղոսեան . . 10
,, Նունոյ Մարգարեան . . 20

(Շարունակելէ).

Այս ցուցակ է 1868 ամին կատարուած նպաստահատքուածեան նուիրատուաց անուանց չարունակութիւնն է է 1869 ամէ հետէ, ուստի կարևոր համարեցաք ծանուցանել ասոնէն, որպէս զի սխալ չհասկնան։

Թեպէտ կարելի էր զայս առանձինն տպել և տեարակ կազմել, սակայն խոտացած լինելով միանգամայն Աղբարատոյ չատ եկեղը չլեցնելոյ համար այնը տակաւ առ տակաւ կչարունակուի և ի նեղկայ ամի կատարուի։

Ի Ս. ԳԱՑԻԱՆԷՎԱՆՈՒՑ.

Հայաստանի ամբողջ տարածութեան վերայ ցըրուած բազմաթիւ վանքերի հոյակապ աւերակները զարմացնումեն օտարազգի ճանապարհորդի աչքը, իսկ ազգասէր հայի սրտից ճմլումեն դառն հառաչանքներ Ազգի և Եկեղեցու վաղանցիկ և նահմանցած փառքի և պայծառութեան մասին։ Այս վանքերը, հանճարոյ անցած դարերու ոգւոն, կենդրոն էին ոչ միայն ազգային կրօնի, այլ և ազգային լուսաւորութեան, ըստ որում սոքա պահեցին և մշակեցին ազգային լեզուն, սոքա ծաղկացրին ազգային մատենագրութիւնը, սոքա յաւուրս բերին գիտնականներ, սոքա պահպանեցին ազգայ սերունդի համար անցած գնացած դարերու տարեգրութիւնները։ Բայց այժմ, —թշնամաց բազմաթիւ չարաչար հարուածների ընդկիւ, ժամանակի ամենայն ինչ մաշող զօրութեան ազդեցութեամբ և դարուս գաղափարի ներգործութեամբ, —այդ վանքերը՝ թափուր իւրեանց շքեղ պայծառութիւնից՝ ներկայացնումեն սրտաշարժ աւերակներ, դառնալով միանգամայն վայրենի թռչունների ապաստան և բնակարան։ Եւ ո՞ր հայ մարդ կարող է առանց տխուր հառաչանքի, առանց դառն արտասուների նայել այդ աւերակների վերայ. ո՞ր Հայի գլխում չեն խառնվում իսկոյն հազար տեսակ մտքեր Ազգի անցեալի և ներկայի մասին, չեն զարթնում հազար տեսակ ցանկութիւններ վերանորոգել այդ աւերակները . . . . բայց որպիսի արագութեամբ ծնանումեն այդ մտքերը և ցանկութիւնները, նոյնպիսի՛ արագութեամբ և անհետանումեն։ Հայ մարդը խօսքով սիրումէ արդարև Հնութիւնը, միշտ պարծենումէ Հայկի, Արամի, Տիգրանի անուններով, միշտ գովումէ իւր հայրենիքի օդը, ջուրը, գեղեցկութիւնը, միշտ պատկառանքով պատմումէ իւր սուրբ և նուիրական տեղերի —վանքերի և եկեղեցիների— ճարտարապետական սքանչելի հոյակապութիւնը, բայց գործով նա չէ սիրում այդ հնութիւնը, նա ուշ և ինամք չէ դարձնում հնութեան մնացորդների վերայ, նա աւերակ է թողնում իւր ազգի և եկեղեցու հնադարեան կեանքի խարխլները։ Գուցէ ամաչումէ նա կամ երկիւղ է. կրում հնանոմոլ վատ մականունը ստանալ. բայց թո՛ղ չլինի նա հնամոլ, այլ լինի հնասէր, այսինքն՝ հնութիւն սիրող, հնութեան մնացորդները յարգող։ Եթէ լուսաւորեալ Եւրոպացիք և մինչև անգամ նոցա տէրութիւնները, ոչ միայն իւրեանց ազգային պատմութիւնը, այլ և ընդհանուր մարդկութեան պատմութիւնը և կեանքի բազմակողմանի երևոյթները մշակելու նպատակով կ ազմումեն հնախուզական (արխէօլօգիական) ընկերութիւններ, և մեծագումար ծախքեր անելով վերանորոգումեն հին երևելի վանքերի, պալատների, տների աւերակները, կամ փորելով հին գերեզմաններ և քանդելով հին տներ որոնումեն և ժողովումեն զանազան հնութիւններ և կազմումեն հնութեանց թանգարաններ, եթէ այդ լուսաւորեալ Եւրոպացիք՝ ի նկատի ունենալով այն մեծ ծառայութիւնը, որը ցուցին ընդհանուր լուսաւորութեան միջնադարեան վանքերը, և չնայելով իւրեանց կրօնական ազատամտութեան վերայ՝ պահպանումեն այդ վանքերից շատերը պայծառութեան մէջ, —ո՛րչափ մենք, Հայերս, առանձին խորին յարգանքով պիտի պատուենք մեր բազմարիւն վանքերի հիշատակը և երբև փոխարէն նոցա կողմից ազգին և եկեղեցուն ցուցած ծառայութեանց՝ կարողացածին չափ պայծառութեան մէջ պահպանենք գոնէ մնացած վանքերը, եթէ չենք կարող կամ

չենք կամենում վերանորոգել արդէն աւերակ դարձածները։

Ի Նկատի ունենալով մի կողմից՝ Ս. Գայիանէի վանքի (Վաղարշապատում՝ Էջմիածնից շատ մօտ) պատմական նշանակութիւնը — ըստ որում այս տեղ ամփոփուած են նշխարքները Ս. Գայիանէի և միւս երկու կուսի, որք Ս. Հռիփսիմէի և միւս ընկերակիցների հետ միասին սկզբնապատճառ եղան Հայաստանեայց առաքելահաստատ եկեղեցւոյ վերահաստատութեան ի ձեռն Ս. Գրիգոր Լուսաւորչի, միւս կողմից՝ այս վանքի ներկայ խանդարեալ և միանգամայն ամայացեալ դրութիւնը, մենք իմդրեցինք և ստացանք Նորին Վեհափառութիւնից վանահայրութեան պաշտօնը այս վանքի մէջ այն դիտաւորութեամբ, որ ըստ չափու մեր կարողութեան վերանորոգենք և պայծառացնենք սորան։

Ս. Գրիգոր Լուսաւորիչը՝ ամփոփելով Հռիփսիմեանց և Գայիանեանց Նահատակների նշխարքները իւրեանց Նահատակութեան տեղերում, շինեց նոցա վերայ վկայարաններ 301 թուին, ինչպէս վկայում ականատես Ագաթանգեղոսը։ Ս Գայիանէի վկայարանը մնաց իւր նախկին դրութեան մէջ մինչև 630 թուականը, երբ Եզր Կաթողիկոսը տեսնելով սորա նսեմ, խաւար և անշուք դրութիւնը՝ քանդել տուեց այն և նոր ինորոյ շինել տուեց մեծադիր և գեղեցիկ եկեղեցի կուիածու քարերով, հաստատելով նաև բնակարաններ միաբանութեան համար, ինչպէս վկայում պատմադիր Ցովհաննէս Կաթողիկոսը, Այնուհետև այս վանքը, չնայելով որ միանգամայն կից է Էջմիածնին, ամբողջ հազար տարու ընթացքում մեծամեծ առանց խնամքի և վերանորոգութեան, և կարելի են անշան և պատմութեան մէջ տեղ չգըտած կարկատաններ։ Ի հարկէ այդպիսի երկարատև միջոցում՝ վանքը չէր կարող մնալ ամուր և շէն, և արդարև, ըստ վկայութեան Առաքել պատմագրի, 17-րդ դարու կիսում՝ սա ներկայացնում եղել կատարեալ աւերակ։ Փիլիպպոս Կաթուղիկոսը, որը գոյէ իրաւացար կարող էր ստանալ շէնող մականունը իւր բազմաթիւ շինութիւնների պատճառով, ուշ դարձրեց Ս. Գայիանէի վանքի վերա և ըստ ամենայնի վերանորոգեց այն, բարձրացնելով եկեղեցու վերայ միանգամայն նոր կամարակիկ կուիածու քարերից 1652 թուին, որոյ մասին վկայում նոյն Առաքել պատմագիրը։ Ցետոյ 1688 թուին Եղիազար Կաթողիկոսը (որ կոչվում Հռոմկլայեցի) շինեց բոլորովին նոր և գեղեցիկ գաւիթ կից եկեղեցու արևմտեան պատին, հաստատելով երկու ծայրում՝ երկու փոքր սեղան՝ աջակողմեանը Յանուն Պետրոս առաքեալի, իսկ ձախակողմեանը Պօղոս առաքեալի, կանգնացնելով այս սեղանների վերայ երկու փոքրիկ կամարակիկ իբրև զանգակատուն։ Սոյն Եղիազար Կաթողիկոսը շինեց նոյնպէս և բնակարանները միաբանութեան համար, շրջապատելով բոլոր վանքը պարսպով, ինչպէս վկայում եկեղեցու արևմտեան պատի դրան աջ կողմի արձանագրութիւնը — «Ես Տէր Եղիազար Կաթողիկոս սուրբ Էջմիածնի Հրոմկլայեցի գոլով՝ տեսի զամայութիւն սուրբ վանացս՝ որ Յանուն սրբոյ Հոգւոյն Գայիանեայ, շարժեցայ ի գութ հոգևոր սիրով և պարսպեցի զսա սրահօք, յարկօք և խցերօք, նաև զգաւիթ եկեղեցւոյս կառուցեալ՝ յաջմէ խորան սուրբ առաքելոյն Պետրոսի և ի ձախմէ խորան սուրբ Առաքելոյն Պօղոսի *), յիշատակ հոգւոյ իմոյ, և ի Հայոց թուականիս ՌՃԼԷ (1688)», ամէն»։ Զաքարիա սարկաւագ պատմագիրը յիշատակելով միևնոյն շինութիւնները, ասումէ թէ Եղիազար Կաթողիկոսը գաւթի հիւսիսային կողմում եղած խորանի (սեղանի) առաջև շինեց և իւր գերեզմանը։

Թէպէտ Էջմիածնայ վանքը ունի իւր համար առանձին գերեզմանատուն, որը աւելի մօտ է նորանից քան թէ Գայիանէի վանքը, բայց վերջին 200 տարու ընթացքում սովորութիւն դարձած է Ս Գայիանէի վանքի գաւթում թաղել կաթողիկոսները, բացի ոմանցից՝ որք թաղուած են ուրիշ տեղերում զանազան պատճառներով։ Այս

(*) Պետրոս և Պօղոս առաքեալների (որք նկարած են սեղանների հանդէպ եղած պատերի վերայ) նոյնպէս և սեղանների վերայ նկարած պատկերների աչքերը փորած են, որը ըստ աւանդութեան արել են բարբարոս պարսիկները։

Եկեղեցւոյ դրան աջ կողմը կայ նաև պատկեր յիշեալ Եղիազար կաթուղիկոսի։ Ց. Հ.

վանքի գաւթում թաղուած են վերոյիշեալ Եղիազար, Աբրահամ Բ. Մշեցի, Ղազար Ջահկեցի, Մինաս Ակնեցի, Յակոբ Ճամախեցի, Սիմէօն Երևանցի, Ղուկաս Կարնեցի, (Յովհէփ Արղութեանց), Դաւիթ Ենագիեցի և Մատթէոս Կ. Պոլսեցի կաթողիկոսները, որոց տապանաքարերը (բաց ի Եղիազար և Աբրահամի՝ որք կորած են բոլորովին, և Մինասի՝ որի միայն վերջին մի կտորն է մնացել) և այժմ կան իւրեանց արձանագրութիւններով։

Եղիազար Կաթողիկոսից յետոյ Ս. Գայիանէի վանքը, ինչպէս երևում է, զարձեալ մնացել է միանգամայն առանց վերանորոգութեան և խնամատարութեան համարեա 200 տարու ընթացքում, ուստի վերջին ժամանակներս վերստին հասել էր խարխլելու և ամայանալու դրութեան։ Բաւականին ընդարձակ և գեղեցկաշէն եկեղեցու կամարների մի մասը և մի քանի կամարները ճաքճաքած են համարեա թէ վտանգաւոր կերպով, պատերը ներսից և դրսից խանգարուած են, քարերից շատերը տեղից շարժուած և մի քանիսը թափած։ Եկեղեցու մէջ տիրապետում էր սաստիկ խոնաւութիւն և մթութիւն, որովհետև ունէր միայն հինգ—վեց մանր պատուհաններ, իսկ մնացածները շարած էին, երևի երկիւղի պատճառով։ Վանքը չունէր ոչ մի բնակարան բաց ի մի քանի մութ և խախտուած սենեակներից, իսկ արտաքին պարիսպը խարխլուել էր և տեղ տեղ փլել, և որովհետև այս վանքը չունի ոչ կալուածք և ոչ արդիւնք ժողովրդից, ուստի սորա վերջին վանահայրները թուի թէ անձնուէր չեն եղել անել որ և իցէ վերանորոգութիւններ։ Նոյն իսկ եկեղեցու մէջ չկար ոչ միայն շքեղութեան զարդեր, այլ մինչև անգամ ամենահարկաւոր իրեղէններ՝ զգեստք, պատկերք սրբոց, և այլն. իսկ բնակարանը բոլորովին առանց կահ ու կարասիքի էր։

Այսպիսի խեղճ վիճակի մէջ գտնելով Ս Գայիանէի վանքը, մենք մեր վանահայրութեան երկամեայ միջոցում թէպէտ կարողացանք փոքր ի շատէ վերանորոգութիւն տալ սորան, զոր օրինակ շարածները բացարրինք և մեծացրինք եկեղեցու մէջ 18 հատ մեծաւոյիր լուսամուտների երկաթի վանդակներով, երկաթաթիղի (մավթուղ) ցանցերով և ապակիներով, նորոգեցինք հարաւային պատի մի մասն՝ որը չափազանց խախտուած էր և քարերը թափել էին, ներսից տուինք եկեղեցուն մանաւանդ պայծառութիւն հոյակապ բիւրեղեայ ջահով, կարևոր պատկերներով, խաչերով, զգեստով, զանգակով, և այլն. իսկ վանքը շրջապատեցինք հիւսիսային—արևելեան կողմից բոլորովին նոր պարսպով (որը ծախքը վճարից Էջմիածնայ վանքը), և արևելեան խարխափած պարսպի մի մասը կարկատելով և միւս մասն բոլորովին նորից շինելով մեծաւոր գներով, վերցրինք խարխափելը շինութիւնքը և շինեցինք բարեվայելուչ բնակարան վանահօր համար չորս սենեակից իւր բոլոր կարևոր կահ և կարասիքով, և փոքր դպրոց նոյնպէս չորս յարմար սենեակից, և այն։ Թէպէտ կարողացանք պատրաստել այս բոլորը, բայց այնու ամենայնիւ թէ եկեղեցին և թէ վանքը դեռ ևս ունին չափազանց շատ պակասութիւններ։ Եւ որովհետև վերոյիշեալ վերանորոգութիւնները մենք կարողացանք կատարել Վեհափառ Հայրապետի հրամանով Էջմիածնայ Գանձարանից մեզ յատկացրած ժամանակաւոր սննդադրամով *) և մանաւանդ աղքատիկ և բարեպաշտ աղջկանց ջերմեռանդ և առատաձեռն նուիրատուներովք, ուստի մատուցանելով նորին Վեհափառութեան մանրամասն հաշիւը արդեանց և ծախուց, ընդ նմին մեզ համար սեպուհ պատասխանութիւն ճանաչեցինք հրատարակել այն և իւ փոխանութիւն ազգայնոց, և մանաւանդ Աստուածասէր նուիրատուաց, մատուցանելով նոցա մեր հրապարակական անկեղծ և ջերմեռանդ շնորհակալութիւնը և բարեմաղթելով Ս. Գայիանէ կուսից՝ որ բարեհաճ լինի Ամենակարող Բարձրելոյն առաջև, որպէս զի նա վարձահատոյց լինի նոցա ամէն և ի հանդիպելութեան։

---

*) Նորին Վեհափառութեան բարեհաճութեամբ և Սինոդի օրագրութեան զօրութեամբ մենք պիտի ստանանք Էջմիածնի գանձարանից սննդադրամ տարեկան 600 րուբ. արծ. չորս 1) տարու ընթացքում, սկսեալ ի 1 էն մարտի 1872 ամի։ Նախ մեր ձեռքին թողած է Գայիանէի վանքին պատկանած մի հատ այգին։ Ս. Հ.

(1) Անցեալ Ամառոյն մէջ փոխանակ չորսի սխալմամբ եօթ րուբ դրուած է։ Ս. Խմբ։

ՄՈՒՏՔ ԵՒ ԱԽՔ Ս. ԳԱԳԻԱՆՑԻ ՎԱՆՔԻ

Ի 1-ԷՆ Մարտի 1872 ՄԻՆՉԵՒ 1873 ՄԻ։

ՄՈՒՏՔ	Ր.	Կ.
Սննդատրամ Էջմիածնի Գանձարանից	1146	—
Նուիրք ժողովրդեան միաձայնով	1171	29
Մոմապին, խաչահամբոյր, ժամից ևլն.	331	92
Արդիւնք պտղոյ	145	55
Ուսման վարձ աշակերտներից	196	69
Փոխարինարար Էջմիածնի գանձարանից	200	—
Գումար մտից	3191	45

ԱԽՔ

Եկեղեցւոյ նորոգութեան և նեղութեան պայծառութեան վերայ։

Եկեղեցւոյ 18 հատ պատուհանների իւր բոլոր պարագաներով	284	5
Եկեղեցւոյ հարաւային պատի կարկատանք	109	99
Եկեղեցւոյ ներքին պայծառութեան համար զգեստներ, պատկերներ, սկիհ, աւետարան, մի մեծ ջահ (150 ր.) զանգակ և այլ պարագայք	455	93
	850	47

Ընակութեան և պտղոյ շինութեան վերայ։

Շինութիւն բնակարանի և պտղոյ և արտաքին պարսպի	994	37
Բնակութեան համար ամենայն տեսակ կահ և կարասիք	227	21
	1221	58

Ընդ ամենայն վերայ։

Ամենայն տեսակ ծախք պտղոյ վերայ	152	96

Տնտեսական կառավարութեան վերայ։

Հանդերձք, անկողինք և սնունդ ուղեկից	696	28
Ռոճիկներ պտղոյ վարժապետին և ծառաներին	270	16
	966	44
Գումար ծախուց	3191	45

Վանավոյտ Ս. Գայեանէ վանէ
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ.

Ի 21 Յունվ. 1874 ՄԻ։

Ի ԳԱՆՁԱՆԿԻՆ

Կարդալով Մշակ լրագրի 34 35 և 49 համարների Մաժակ ստորագրութեամբ նամակները, որոց առաջին երկու համարները Գանձակից ուղարկուած, իսկ վերջինը որպէս թէ Գարբանլից՝ նոյն իսկ Մաժակն Գանիէլեանց ձեռակերպակալ, շատ զաւեշտոյց մեզ և առհասարակ մեզապիսի բազմաթիւ Գանձակեցւոց սրտերը. ուստի ինդրեմ այո իմ մի քանի տող գրութիւնս արժան համարէք ձեր ազդօգուտ Արարատ ամսագրոյ էջերի մի անկիւնում տեղաւորել։ Ընդելով որ, ինչպէս լսում եմ, շատ անգամ մի քանի երիտասարդներ նորա ղեմը գրելով ուղարկել են Պ. Մշակի խմբագրին տպելու, բայց մեր պարոնը, իւր մտաց մէջ հաստատ դնելով, որպէս զի Հայոց հոգևորականութիւնը խայտառակէ . . . . . և վասն այն արժան չէր համարել տպելու, կամ լաւ ևս ասել, իւր գաղափարին և մտաց ճաշակին յարմար չգտնելով՝ զանցաւութեան էր տուել, ի հարկէ չեմ մեղադրում Մշակին, որովհետև աշխատում է իւր նպատակին հասնելու։ Աւածն էլ ասում է, որ սպիտակ շունը բամբակ գզողին վնաս է, ուստի պատճառներ ունէր Մաժակի գրութիւնները տպելու, իսկ նրանցը՝ ոչ, իրեն յայտնի պատճառաւ։ Վերջապէս 34 համարում պարոն Մ. ուսումնարանի հարցաքննութեանց մասին խօսելուց յիշոյ աւելացնում է թէ՝ «մեր եկեղեցւոյ երեցփոխան . . . . . հանգը ստիպուած ինչ ինչ հանգամանքներից արձակուրդ է խնդրում և վերջը խորհուրդ է տալիս Հոգևոր կառավարութեան այդ բանի առաջը առնել»։ Ճշմարիտ է Պ. Մաժակ, ես էլ համաձայն եմ ձեզ հետ, որ Պ. . . . հանգը արժանաւոր մարդ էր երևում նախ քան այդ պաշտօնը յանձն առնելը և մենք շատոնց յոյս ունէինք՝ որ նա եկեղեցւոյն շատ օգուտ պիտի տար, բայց նորան ոմն ստիպեց այդ պաշտօնից հեռանալ՝ եթէ ոչ նորա փոխարինական ընութիւնը։ Միտդ գալիս է այն օրերը, երբ ցանկանում էին նորան դէպուտատ ընտրել, հրաժարուեց ասելով՝ ես պէտք է հոգաբարձու լինեմ. երբ հոգաբարձու ընտրուեց՝ հրաժարուեց ասելով՝ թէ ես . . . . իշխն հետ չեմ կարող կա-

ռավարուել, ես պիտի երեցփոխ լինեմ. երբ եր-
եցփոխ ընտրուեց՝ մէկ ընչին պատճառով հրա-
ժարուեց իւր անձը ազատ պահելու համար ազ-
գօգուտ գործերից։ Ա՛յս տեղ չեմ ուզում խօսել
կամ լաւ ևս ասել յիշել նորա փոխհոսական
խօսքերի մասին Իզմիրեանցի ազգու խօսքերը։ Գու-
ցէ շատերը հետաքրքիր լինին իմանալ այդ իմ
ասաց ընչին պատճառների միտքը, ուստի խօսքս
աւելի պարզեմ։

Քաղաքիս մէջ մարդու մէկը իւր ազգասիրու թե-
նից շարժուած՝ տղայի պսակեղց ժամանակ տալիս
է տեղւոյս յաջորդին հարիւր րուբլի, կէսը նշա-
միածնայ համար, իսկ կէսը տեղւոյս շտեմարանի
համար։ Երբ միւս օրը լսում է Պ. . . . . .
հանց, ժողովում է մի քանի մարդ և գնում է
նոյն իսկ ընծայատուն մօտ և ստիպում է իւր
նպատակը փոխել բոլորը շտեմարանին նուիրելով.
այս մասին երբ Յաջորդը իւր խօսքը պնդում էր՝
թէ կէսը պիտի էջմիածին գնայ քո խոստմանքը,
Պ . . . . հանց պատճառ բռնելով այդ բանը՝
թողում է երեցփոխանութիւնը։ Ահա ձեզ իսկ և
հաստատուն տեղեկութիւն, այս բանիս մէջ մէկ
մազի չափ սուտ չկայ, թող իմ ընդդէմս գրեն,
և եթէ սուտ եմ այն ժամանակ իմ խօսքս յետ
կառնեմ, ինչպէս Մաժակն ևս Մշակի 35 հա-
մարում գրում է ճշմարտութիւնը թողնելով,
որպէս թէ ընծայատուն հէնց իսկապէս այդ գրա-
մը բոլորը շտեմարանին է նուիրած և ոչ կիսով
չափ էջմիածնայ։

Իսկ ինչ որ վերաբերում է 35 համարի
նամակին, այսքանս կասեմ որ Ս. Հայրը իւր
եկած օրից մինչև ցայսօր ամենին մխիթարուած
պահել է և պահում է ևս առաւել զանա-
զան ազգու քարոզներով և խօսքերով դէպի
ճշմարտութեան ասպարէզը տանելով, խրա-
տում է հեռանալ մոլի ճանապարհներէն և ազ-
գանշաս գործերէն. իսկ այն աւուր քարոզն բնա-
բանը լինելով «Եւ հրեշտակք նոցա հանապազ
տեսանեն զերեսս Հօր իմոյ, որ յերկինս է», չէր
կարող այդպիսի քարոզն ընդհատ տալ, այլ թէ
սուրբ Հայրը, ինչպէս որ ես էլ և ինձ նման հա-
զարաւոր մարդիկ կային եկեղեցւոյ մէջ, այն բո-
նաբանը ինչպէս որ հարկաւորն էր բացատրելին
յետոյ՝ մխիթարից մեզ զգուշացնելով հոի մեղ
ընտակար գործերից. — ի հարկէ Պ. Մաժակը
հասկացել է որ շատ բան իրան է վերաբերում,
այդ պատճառով գրել է առակն էլ ասում է «կուժ
քեզ ասեմ, կոլայ դու իմացիր». ամեն մարդ
իրաւունք ունէր իւր գործքին նայած քարոզի
միտքը իրան վերաբերել, ինչպէս Պ. Մաժակը,
որ իրեն անկարգ գործքերից յանդիմանուելով,
արատաւորում է ուրիշին՝ կարծելով այլոց վա-
տաբանելով՝ իրեն արածներին չէ արդելուելու և մե-
ղադրուելու. ամենայն որ եթէ իրեն ուղղէ՝ կտեսնէ
որ ուրիշն իրաւացի յանդիմանութիւններն ար-
դար են եղած իրեն համար։

ՄԱՐԳԱՐ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

Ի 24 Դեկտեմբ. 1875 ամ.
Ի Դանյակ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԴՊՐՈՑ

Թոյլտուութեամբ քաղաքական իշ-
խանութեան կոկսի ներկայ 1874 թուա-
կանի սկզբից հրատարակուիլ ի Վաղար-
շապատում Ս. Գայիանէի վանքից՝ նորին
վանահօր ի Ահան վարդապետ Խաստա-
մեանցի խմբագրութեամբ մանկավարժա-
կան ամսագիր Դպրոց վերնագրով։ Դպրոցի
նպատակն կլինի ջանալ՝ իւր կարողութեան
չափ ձեռնտու լինել ազգային դպրոցների
յառաջադիմութեան։ Դպրոցը կբաժա-
նուի երկու բոլորովին զանազան մասների։

Առաջին մասն — իբրև մանկավարժական
առաջնորդ դպրոցների վարժապետների և
վարչութիւնների համար-կպարունակէ իւր
մէջ՝ 1) մանկավարժական խորհրդածու-
թիւններ, 2) քննութիւն դպրոցական

կանոնագրութիւնների, դասագրքերի և առ հասարակ մանկավարժական շարադրութիւնների, 3) Տէրութեան և ազգային ընդհանուր իշխանութեան կարգադրութիւնները յատկապէս ազգային ուսումնարանների վերաբերմամբ, 4) պատմական և վիճակագրական տեղեկութիւնները հայոց, Ռուսաց և օտարազգի դպրոցների մասին, 5) Դպրոցների վարչութիւնների հաշիւները, յայտարարութիւններ և այլն:

Երկրորդ մասն—իբրև ընթերցարան աշակերտների համար—կրովանդակէ իւր մէջ, 1) Պաղուածներ ազգային եկեղեցական պատմութիւնից, 2) քաղուածներ հայոց, ռասաց և ընդհանուր պատմութիւնից, 3) համառօտ տեղեկութիւններ բնական (ֆիզիքական) և քաղաքական ընդհանուր աշխարհագրութիւնից, 4) մանաւանդ տեղեկութիւններ բնական դիտութեան ամենայն ճիւղերից, 5) համառօտ քաղուածներ զանազան երկրներում կատարած ճանապարհորդութիւններից, 6) համառօտ կենսագրութիւններ երևելի մարդոց, 7) համառօտ հատուածներ ազգային ընտիր շարադրութիւններից հին (գրոց) և նոր (աշխարհիկ) ոճով, 8) Մանկական վէպեր, ոտանաւորներ, առակներ, և այլն:

Դպրոցի երկու մասն միաւորուած կլինին միևնոյն տետրակների մէջ, հրատարակուելով իւրաքանչիւր ամիս մի տետրակ հինգ և աւելի տպաճ թերթից, երբեմն նաև պատկերազարդ՝ եթէ նիւթաւոր միջոցները կինեն: Դպրոցի տարեկան գինը է ճանապարհածախքով կանխիկ վճարելի՝ Ռուսաստանում վեց րուբլի, Տաճկաստանում և Պարսկաստանում եօթն րուբլի:

Խմբագրատունը ընդունվում հետևեալ Դպրոցի [1]) խմբագրատանը, որոյ հասցէն է՝ Վաղարշապատ (կամ Էջմիածին) Ս. Գայիանէի վանք, խմբագրութեան Դպրոցի. Ռոսերէն՝ Въ Вагаршапатъ (или Въ Эчміадзинъ) въ редакцію журнала Дпроцъ, въ монас. св. Гаяне [2]):

Խմբագիր—հրատարակիչ
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ,
Վանահայր Ս. Գայիանէի վանքի,

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ԲԻՋԱՆԴԵԱՆ

ԱՍՈՐՈՑ ԽՆԴԻՐ ԵՒ ՋՐԿԱՆՔ.

Մեր ընթերցողաց յայտնի է՝ թէ ի՞նչ է Ասորւոց լեզուին, որ Ս. Գրան խոհեմ անօրինութեան և հրամանով լուծուելով՝ Ասորւոց կաթուղիկոսն և գործերն դարձեալ մնացին հին դրութեան մէջ՝ այս ինքն Ս. Պօղոսի Պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ, ուստի և սկսեցին օրինաւոր և հաշտ յարաբերութիւնքն՝ ինչպէս կերևի փոնջի հաղորդած հետևեալ լուրէն:

1) Դպրոցի խմբագրութիւնը ինդրում է չըխառնել սորան Ազբարի խմբագրութեան հետ բաժանորդագրներ և յօդուածներ ուղարկելու կողմից՝ և դորանով չպատճառել զանազան դժուարութիւններ երկու խմբագրութեան ևս:

2) Որովհետև ինչ ինչ պատճառներով ուշացաւ այս յայտարարութիւնը, ուստի Դպրոցի առաջին և երկրորդ համարները կհրատարակուին միասին Փետրուարի վերջերում:

«Ասորւոց Կաթողիկոսն երկու վարդապետաց հետ չորեքշաբթի օրը՝ Պատրիարքարան Տեղապահ Ս. Հօր, և երեկ ալ Գալաթիա Քազաքական ժողովոյ ներկայանալով՝ պէտք եղած գիրը մատոյց, և հետևաբար որոշուեցաւ՝ որ իւր ընտրութեան վաւերացման կայսերական հրովարտակն ու առաջին ասպիճանի Մէճիտիյէ պատուանշան խնդրելու համար պատրաստակաւ Թագուիրը Բ. Դրան տրուի։

Որովհետև Կաթողիկոսն այլ և այլ խնդիրներ կառաջարկէր ազգային Վարչութեան, ազգապատրուիրն եղաւ իրեն՝ որ գրով տայ, և միանգամայն ծանուցուեցաւ որ պատրիարքարանի դիւանատան մէջ (ինչպէս ուրիշ յօդուածով մը ծիտողութիւն ըրած էինք) Ասորի և Հայ կամ տաճիկ լեզուաց հմուտ գրագիր մ՚ունենան՝ իրենց կողմանէ առ Պատրիարքարան ուղղեալ գրութիւններն թարգմանելու և անմիջապէս ժողովոյն մատուցանելու համար, և կամ փոխանորդ մի կարգեն մայրաքաղաքիս մէջ։

Կաթողիկոսն այս պաշտօնական ներկայացմանց առեն դառնապէս գանգատեր է հետևեալ անիրաւութեան դէմ, որուն ենթարկուեր են ասորիք բաւական ժամանակէ հետէ։ — Հասան էֆէնտիի պատրիարքութեան առեն, Մ՚ուսուլի մէջ 100/ չափ ասորի ընտանիք հռոմէական կրօնքն ընդուներ են։ Հասան էֆէնտի (որոյ յիշատակն օրհնեալ (°) ըլլայ) պաշտպանութեան թևերը բացեր տարածեր է նոր հաւատացեալց վրայ, և մինչև անգամ յաջողեր է՝ Մ՚ուսուլի մէջ գտնուած ասորի եկեղեցեաց մէջ տեղերէն պատքաշել տալ, և եկեղեցեաց կէսերն ու եկեղեցական ամբողջ կալուածներն յանուն Նորահաւատ սակաւաթիւ ասորւոց գրաւել, մինչդեռ հազարաւոր տուն բնիկ ասորիք կգտնուին յիշեալ քաղաքին մէջ։ Արդարև մեծ զրկանք, որում՝ ոչ ոք կրնայ հանդուրժել։ Տաճկաստանի մէջ որ ազգ այսպիսի զրկանաց ենթարկուեր է, իրմէ ոմանց բաժնուած առեն։ Մեր ազգէն ալ երկու հերձուած եղած է, բայց չեն կրցած մեր եկեղեցիներէն ու եկեղեցական կալուածներէն ոչի մի հող անգամ գրաւել։ Ահա Պուլղարք ալ բաժնուեցան յոյներէն, բայց կրցան որ և է տեղ իրենց սեպհականել։

Ո՛րչափ ծանր է Ասորւոց, տեսնել իրենց եկեղեցեաց մէջերէն քաշուած պատերը, և հանապազ երթալ պատին միւս կողմը ժամերգութիւն ընել, ու հանդարտ սրտիւ աղօթքի կենալ։ Ո՛րչափ ծանր է այս նիւթապէս ու բարոյապէս թշնամատ ժողովրդեան՝ տեսնել իրենց եկեղեցական կալուածոց պատուումն։

Ըստ որում Ասորիք մեր Պատրիարքարանի պաշտպանութեան տակ կգտնուին, մեր պատրիարքարանին պարտքն է՝ միայն ցաւելով չանցնել այս տարօրինակ անիրաւութիւնը, այլ ազդու կերպիւ բողոք բառնալ առ կայսերական արդարասէր կառավարութիւնն։ Արդեօք անցեալ ժամանակաց մէջ մեր Պատրիարքարանն ի՞նչ միջոց ի գործ դրեր է՝ ի սկզբան յուզման այս կարևոր խնդրոյն»։

փունդ, թիւ 852, 8 նոյ. 5։

Մ՚ասիոյ մէջ երևեցաւ հետևեալ կարևոր և հետաքրքրական պարբերութիւն։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ի Ե Տ Ի Ք Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ի։

Մեր վաղեմի բարեկամ՝ մեծար. Պ. Տիւլօրիէ Հայագէտ Գաղղիացին՝ անցեալներս գրած էր մեզ թէ բարեբաղդ դիպուածով մը Գաղղիոյ արտաքին գործոց դիւաններէն ձեռագիր մատեան մը գտեր է, որոյ մէջ Աւետիք Պատրիարքին վերաբերեալ բազմաթիւ պաշտօնական թուղթերէ զատ՝ նաև անոր Հայերէն կենսագրութիւնն և ուրիշ այլ և այլ գրութիւնները կան, ամենն ալ իւր ձեռօք գրուած, և խնդացուցեր էր մեզ թէ ինքն այն ամեն թուղթերն ու գրուածները՝ որք մեծակակ մատեան մը կրնան կազմել, ամբողջապէս օրինակած ըլլալով, մատղիր էր ամենը մեկէն տպագրել. բայց անոր ինքնագիր պատմութեան մեկ օրինակը կը խոստանար յուզարկել մեզ, Մասիս մէջ հրատարակելու, եթէ կամէինք։

Աւելորդ է ըսել թէ մեր ազնիւ բարեկամին այս կարևոր առաջարկութիւնն ամենայն գոհութեամբ կատարելու պատրաստ ըլլալնիս փութացինք խնդա-

նել իրեն, և վերջապէս երէկ ստացանք խոստացեալ ծրարն հետևեալ նամակով։

«Սիրելի Պ. Իւթիւճեան։

«Ահա կը ղրկեմ ձեզ Կ. Պոլսոյ Հայոց Հոչակաւոր Աւետիք Պատրիարքին կենսագրութիւնը, զոր խոստացած էի հաղորդել ձեզ, Մասիսի մէջ հրատարակուելու համար։ Այս կենսագրութիւնը՝ որ նոյն ինքն Աւետիք Պատրիարքին ձեռօք գրուած է, Փարիզի արտաքին գործոց նախարարութեան դիւաններուն մէջ պահուած մատեանի մը մէջէ գտայ և օրինակեցի։ Ցիշեալ մատեանն ուրիշ շատ գրուածներ ալ կը պարունակէ նոյն տարաբաղդ Պատրիարքին գրչէն ելած. բանաստեղծութիւններ, աղօթքներ, բանէն ազատութիւն ստանալու համար աղերսագրեր, և վերջապէս իր Պատրիարքութեան օրով Հայոց ազգին ըլլ և այլ գործերուն վերաբերեալ կանոնակներ, զորս Գաղղիոյ ոստիկանութիւնը գրաւած էր պատրիարքին Մարսիլիա հասած ժամանակը։ Մեր ուրիշ դիւաններուն մէջ ալ շատ մը թուղթեր գտայ Աւետիք Պատրիարքին վերաբերեալ, որք նոր լոյս մը կը սփռեն այն խաւարային մեքենայութեան վրայ, որուն զոհ եղաւ Աւետիք, Քիոս կղզւին դաւով վերցուիլը, Մէխինայի հաւատաքննութեան բանտը գրուիլը, յետոյ Մարսիլիայի նաւարանին վնդանը գրուիլը անկէց Սէն Միշէլ լեռան վանքը փոխադրուելով բանտարկուիլը, յետոյ Փարիզ տարուելով Պաստիլլի բերդը գրուիլը, մեռնելէն ետև ալ արևելեան լեզուաց արքունի թարգման Բրիճ Տըլա Ռուայի տունը թաղուիլը, մանրամասնաբար պատմուած են։

Իբրև պետական բանտարկեալ, Լուի ԺԴ-ի հրամանաւ վերջին խստութեամբ դաղտնի պահուեցէ ետև, վերջապէս կաթոլիկ կրօնն ընդունելով արձակուած է բանտէն։

Ա՛յն ամեն թուղթերն ու գրուածներն, ուր Աւետիք Պատրիարքի պատմութեան հետ նաև Հայոց այն ժամանակի պատմութիւնն և Սուլթան Նայ պալատին մէջ եղած յեղափոխութիւնները խառնուած են, թարգմանութեան մը չափ հետաքրքրաշարժ են ե գրուիչ, և երկու հատոր գրքի նիւթ կը մատակարարեն ինձ։

Ձեզ ղրկած կենսագրութիւնս հրատարակած ժամանակնիդ կաղաչեմ որ Աւետիք պատրիարքին հայերէն ոճն և ուղղագրութիւնը քնաւ չփոփոխէք. ես ամենայն հաւատարմութեամբ օրինակած եմ զայն։ Մուրի կամ անկատար խօսքեր կան մէջը, զորս պարտք է նոյնութեամբ հրատարակել, բաւական համարելով կանխաւ պիտկուցանել ձեր ընթերցողաց։

Եթէ կուզէք, Աւետիքի մնացեալ գրուածներն ալ կրնամ օրինակել ու ձեզ ղրկել։

Հաւատացէք, սիրելի Պ. Իւթիւճեան, իմ ամենանձնուէր ղգացմանցս։

ԵՍ. ՏԻՒԼՕՐԻԷ.

Ց. Գ։ Ձեզ կը յանձնեմ իմ հայերէն պիրս կարդալու խնամքը, թէ և դիւրընթեռնլի է, և կէտադրութիւնը ճշդելը։ Միանգամայն ծանօթութիւն մը գրած եմ կենսագրութեան սկիզբը՝ իբրև ներածութիւն հրատարակութեան, զոր ձեզ կը թողում հայերէնի թարգմանել։

Այս նամակէն դիւրաւ կը հասկցուի թէ Պ. Տիւլօրիէ մեր ազգին համար պատմական ամենակարևոր և ամենահանկագին գիւտ մ՚ըրած է, որ համար պարտաւոր ենք ոչ միայն ազգովին շնորհակալ, այլ և ձեռնտու իսկ ըլլալ իրեն, որպէս զի այսչափ խնամով փնտուած ու ձեռք ձգած գրութիւնները ժամ առաջ հրատարակէ, ինչպէս որ մտադիր է։

Աւետիք Պատրիարքին ինքնագիր կենսագրութիւնը 46 երես է միայն, մինչդեռ Պ. Տիւլօրիէի հաւաքած բոլոր գրուածներն ու պատմական տեղեկութիւնները, ինչպէս կրսէ իւր նամակին մէջ, երկու հատոր գիրք կրնան կազմել, զորս ամբողջապէս ի լոյս ընծայելու պատրաստ է, կրսէ մէկ ուրիշ նամակին մէջ, եթէ գրավաճառ մը կամ ուրիշ անձ մը վրան առնու տպագրութիւնը։

Ցաջորդ թուով Պ. Տիւլօրիէի ներածութեան թարգմանութիւնը պիտի հրատարակենք, հետևեալներով ալ Աւետիք Պատրիարքին կենսագրութիւնը։

Մասիս, թիւ 1488, յունվ. 17.